

hkn
2092

1999

ՄԻԱԲԱՆ (ԳԱԼՈՒՍՏ ՍԷՐ-ՄԿՐՏՅԵԱՆ) .

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

22



(Արտատպած «Արարատ» ամսագրի 1894 թ.)



ՎԱՂԱՐՅԱՍ

Ի Տպարանի Սրբոյ Կաթուղիէ Էջմիածնի

1894

ՀՐԱՄԱՆՔ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ Ա՝

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂՈՍՈՒԹ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

42092.60

Հ. Գ. Գ. Գ.



ՀԱՅԿԱԿԱՆԳ *

Ա

Մ • Խորենացու լաւ չհասկացուած բառերից մէկն է „այրեցող“ մի անգամ միայն գործածուած բառը. „Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, այրեցող, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ“: (Խոր. Գ. ողբ): Վերջին թարգմանիչներից Հ. Խորէն Ստեփանէն այդ

* Այս գրուածքը պէտք է նկատել իբրև շարունակութիւն իմ Խորենացու Պատմութեան Ուսումնասիրութեանց», որը ընդհատուեց ծանր հիւանդութեան և երկարատև բացակայութեան պատճառով: Վերնագիրը փոխուած է, որովհետև այս հետազոտութիւնները վերաբերում են ոչ միայն Խորենացուն, այլ մեր հին մատենագրութեանը ընդհանրապէս:

Մ ի ա բ ա ն.

բառը թարգմանում է „իբր ինքեցնօղ“, իմի-
նը իւր նորագոյն ուսու թարգմանութեան մէջ՝
насмѣшливыи = ծաղրող, ծաղր և ծանակ սի-
րող: Մինչդեռ այրեցող նշանակում է կրակ ձը-
գող, զհատութեամբ հրդեհող: Հրձգութիւնը,
այն է՝ թշնամաբար մէկի տունը, դէզը, մա-
րազը և այլն հրդեհելը ամենատարածուած
քրէական յանցանքներից մէկն է այժմս էլ հայ
զիւղացիների մէջ: Երևի այդպէս է եղել և
հնումը: „Այրեցող“ բառի այդ իրաւաբանա-
կան նշանակութեանը վկայում է Մխիթար
Գօշը. „ԽՂ. Յաղագս դատաստանաց այրեց-
ղաց“: — Եթէ կամսս աս հո՛ր դ'ցէ քան...
Ապա եթէ ամբար խոտոյ կամ օրանի կամ յայս-
պիսեացս իցէ, կրկին լիցի տուգանքն: Նոյն
լիցի ցանկոյ և նմանեաց նորին. այսպէս հան-
դերձից և նոցին նմանեաց“: (Ռատասանագիրք,
հր. Վ. Բաստ. Վղրշպտ. 1880 եր. 359: Տես
նաև եր. 353, Յաղագս դատաստանաց հրդե-
հից. այլ և՛ Ներսէս Բ կաթողիկոսի կանոննե-
րը, կանոն ժ. 1. — վասն որ դպրո՞ն այրէ քնի՞րտն

... կանոն իԹ — վասն որ հացի դէպ այրէ և այլն,
Ռատաստանագիրք, յառաջաբան. եր. 74.:

Մի ուրիշ աւելի կարևոր վկայութիւն,
որը անշուշտ աչքի առաջ է ունեցել Խորե-
նացու Ողբի հեղինակը. — „Վնասակարացն և այ-
րեցողացն“ որ զտունս այրեն և կամ զայլ ինչ
նիւթ՝ ի ամ ապաշխարեսցեն“: (Եպիփանու
կիպրոսի սբ. հայրապետի կանոնք. Ձեռ. Մա-
տեն. Էջ. № 1737): Հմմտ. Խորենացու ա-
սացուածը՝ „այրեց-դ+ քնասակար+“:

Ահներև է որ Խորենացու այբի-բների թուին
պէտք է աւելացնել և այս կանոնները: (Տես
և Ձ. րբանալ. Հայկական թարգմանութիւնք,
եր. 499. կանոն փետան Եպիփանոս):



Խորենացու վերեն առաջ բերուած հա-
տուածի մէջ իմ կարծիքով մինչև օրս ու-
ղիղ չէ հասկացուել և հետևեալ ասացուա-
ծը. „խասիլդ+ Ի Ժասանի+“ ևն: Իմինի նորա-
գոյն թարգմանութիւնը (աւելորդ ենք համա-

րում բոլոր թարգմանութիւններն յիշել խոյս
տալով երկարութիւնից: Էմինի այս նոր թարգ-
մանութիւնն է համարուում ամենից կատա-
րեալը. տես նոյն գրքում պ. Գրիգոր Խալա-
թեանցի յառաջաբանը) այդ կտորը հասկա-
նում է ինչպէս և իւր առաջին թարգմա-
նութեան մէջ՝ „ЧУЖДАЮЩИЙСЯ ДУХОВНАГО ЗВА-
НІЯ“: Այսպէս են հասկանում և ամենքը,
չփոթելով ժամանակ-նի-ն և ժամանակա-որո-
նի-ն բառերը: Ոչ մի միտք չունի հին հայ
ուամկի մասին ասել թէ նա փախչում էր ժա-
ռանգաւորութիւնից, այսինքն է՝ եկեղեցական
կոչումից, քանի որ այս կոչումը տալիս էր մե-
ծամեծ արտօնութիւններ, դիւրակեցութիւն
և «չար»-նի-ն: (Տես Ազաթ. ձԺԹ. ազա-
րակներում չորս չորս հոդ) իսկ աւաններում
եօթն եօթն երգի (տունս ծուխ) հող ժա-
ռանգաւորների համար յատկացրած: Տես
Մխիթ. Գօշ. Մասն Ա. յղգս դատաստանաց
եկեղեցւոյ ժառանգաւորաց, յաղագս դատ-
տանց քհնյից, յաղագս դատ. վանաց. Բաս-

տամեանի 416, 418, 419, 420 ծանօթ. Լէն.
Լէն.): Այսօր էլ չնայած մեր գիւղական քա-
հանաների աննախանձելի վիճակին՝ գիւղացին
չէ փախչում ժառանգաւորութիւնից, այլ
ընդ հակառակը, շատ անգամ նոյն իսկ ա-
հագին պարտքերի մէջ է խրուում այդ վիճա-
կին արժանանալու համար: Վանական ժա-
ռանգաւորութիւնն էլ հին ժամանակում կա-
պուած էր նիւթական նուիրաբերութիւնների
հետ. այդ բանին վկայում են մեզ հասած
բազմաթիւ արձանագրութիւնները վանքերի
պատերի վրայ. „Նտու զայգիս և ճաքանեցայ,
ետու զջրաղացս.“ Լէն. Լէն.: Խեղճ և ընկ-
ձուած հայ գիւղացին, որ կրում էր բոլոր
տուրքերի, հարկերի ծանրութիւնը (տես
Մխիթ. Գօշ. և անթիւ արձանագրութիւնք
հարկերի մասին „Այրարատ“, „Սիսական“,
„Շիրակ“ Լէն.) ոչ թէ ժամանակա-որո-
նի-նից (եկեղեցական կոչումից) էր խուսափում, որ
իւր համար մի փրկութիւն էր, այլ իս-
կապէս իսխում էր շատ անգամ իւր ժա-

«...-նի-նից, այն է՝ իւր հող ու ջրից՝
 թ...-նից փախչող զիւղաղցիներ յայտ-
 նի են հողատիրութեան պատմութեան մէջ՝
 բոլոր երկրներում, մանաւանդ միջին դարե-
 րում: Արբ իշխանի, ազատի, նախարարի հող
 ու ջրից օգտուելը ծանր հարկերի և պար-
 տաւորութեանց պատճառով այլ ևս անհնարն
 էր դառնում, այն ժամանակ ռամիկներն սկը-
 սում էին փախչել իրենց ժառանգութիւնից,
 դիմելով աւելի մարդասէր և մեղմ բարքերի
 տէր իշխանների, վանքերի, կամ իբրև անկախ
 և զրեթէ ազատ մարդ վարձւում էին ուրիշ-
 ների մօտ: Մեր դրացի վրաստանում յայտ-
 նի է մի այլպիսի դասակարգ՝ առաջ եկած
 փախստական զիւղաղցիներից խիլան անունով:
 Առաջերի մէջ հանդիպել եմ խիլան կամ խիլա-
 նապ կոչմանը և մեր մէջ, առանց որոշ ցուցում-
 ների: Թէպէտ և ծրագր-նի-նի (servage, քրճ-
 постное право) վերջնականապէս չհաստատուեց
 Հայաստանում, բայց վրաց տիրապետութեան
 ժամանակ մասնաւոր փորձեր եղան: (Տես ճոր-

տի յիշատակութիւն արձանագրութեանց մէջ.
 «Այրարատ» եր. 171 ծնթ. 1. «Աւետիս,
 մականուն Կոնկիկ՝ շինական (=ճորտ) ընծա-
 յուած Յովհաննավանքին: Այլպիսի «շինա-
 կանի» յիշատակութիւն տես և եր. 263 վա-
 սակի արձանագրութեան մէջ: Մի երրորդը՝
 «Խաչատուր ճորտ» եր. 172: Բայց այս բոլոր-
 րը պէտք է համարել մասնաւոր երևոյթ, և
 վերագրել վրաստանում տիրող կարգերի ազ-
 դեցութեանը): Այս մասին թանկագին տե-
 ղեկութիւններ ունի և Մխիթ. Գօշը: Նրա կա-
 նոնները թէև շատ տեղ ընդօրինակութիւն
 են սուրբ զրքի, սակայն անկասկած է որ իւր
 ժամանակում իրական նշանակութիւն ունեին:
 Կամ աւելի ճիշտն ասած՝ իրականը, կեանքի
 մէջ իսկապէս գոյութիւն ունեցողը՝ անհա-
 մեմատ աւելի խիստ, ռամիկ համար ծանր և
 դժուարատար էր, քան Գօշի տուած վճիռնե-
 րն ու ցուցումները: Գօշը իւր ժամանակի
 ամենամեծ յասարակ և յառաջագիմական մար-
 զըն է եղել և իւր վճիռները բոլորը յօգուտ

ուսմին) ժողովրդեան են, (անշուշտ իւր ժամանակի տիրող հայեացքների հետ համեմատած):

Խորենացու այս առաջ բերուած ասացուածի ձիւշտ հասկացողութեան համար մասնաւորապէս կարևոր է Գօշի հետևեալ յօդուածը, որից երևում են թէ Գօշի անձնական հայեցակէտը և թէ նոյն ժամանակ տիրող հայեացքները այս առաջնակարգ խնդրի վերաբերութեամբ: — «Ազատ յԱրարաչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տէրանց յազազս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան, զի Ռդեայ զաբերանին (=տէրունի հողն ու ջուրը) ապար է (շինականը) ուր և կաճեցի կայ: (Այս Գօշի կարծիքն է): Ապա (եթէ) այժ ոչ ներքէ ոչ ի արեանցն և բանադապէ զժնացեալսն անբէն դառնայ՝ զկնի մահուան հօրն ազատ են որդիքն քնեայ այլ ուր և ոչ անդ»: (Յազրո զատաստանաց շինականաց՝ եր. 320, տես և եր. 317 „... յորժամ աւերս շինես-

նուններ է հասկանում «Մօր Մեծ, գաշտ Մեծ, գետ Մեծ», գրելով զխատառով, և այս բանի բացատրութիւնը գտնուում ենք հրմուտն Արիշանի «Այրարատում» (եր. 4, 5, 106—107), ուր ասուած է ի միջի այլոց. «Արդ Ծովակն շիւսիսոյ յայտ է կոչեցեալն և Պաղակացիս և այժմ Չըլարը — կեօլի — յորմէ ելանէ արդարև համանուն գետակ և իջանէ ի գետն Ղարսայ, և ըստ այսմ լինի Մօր Մեծ, և ջուրն Չըլարայ Մեծ գետ, իսկ Մեծ գաշտ պատշաճի անհսկառակ Զարիշատայ վիճակին, զի ջուրն այն Չըլարայ կտրէ զնա ընդ բովանդակ լայնութիւնն ի հիւսիսոյ ընդ հարաւ: Սակայն թուի ինձ Մեծ կամ Մեծագէտ անուն՝ պատշաճագոյն վերին կիսոյ մասին սյժմեանս Արփոյ չայի, այսինքն ցիսառնուրդըս կարուց գետոյն ընդ նա. քանզի ճիւղագոյն օրինակ թէ (?) աշխարհագրութեան նորին խորենացոյ, յիշելով զգաւառսն «Վանանդ և Նիրակ, (յարէ ի նոյն), յուրց եկեալ գետն Ախուրեան, հանգերձ Մեծագէտովն, անցա-

« նելով յելից կուսէ Մաւրիկոպոլսի, այսինքն
 « Շիրակաշատի և Մրենոյ և Երուանդաշատ
 քաղաքի իջանէ յերասխ »: Արգ քանդի սու-
 տանօր որոշակի ցուցանի Ախուրեհի գալ ի
 Վանանդայ և ի Շիրակայ՝ հանդէս Մեծագետնի՝
 պատշաճագոյն թուի այս անուն՝ Արփայի,
 քան Չրլորբայն» և ըն... (Այրարատ եր. 4, 5,
 այլև 106—107): Այսպիսով Հ. Ալիշանը խոր-
 ենացու վերևում առաջ բերուած հատուա-
 ծին տալիս է բոլորովին նոր բացատրութիւն,
 որով այս Մեծ Մօրը, Մեծ Գետը կամ Մե-
 ծագետը և Մեծ Գաշտը արարատեան դաշ-
 աից դուրս են մնում և ընկնում են Հիւսի-
 սային Մովսիսի մօտերը:

Եւ յիրաւի սուր ուշով քննելով Հ. Ալիշա-
 նի պատճառարանութիւնը (մանրամասնու-
 թիւնները տես «Այրարատում») և միւս կող-
 մից խորենացու հատուածը համեմատելով Հ.
 Սուքրեանի հրատարակած խորենացու Աշ-
 խարհագրութեան 34 երեսի հետ, տեսնում
 ենք որ իսկուպէս կայ մի Մեծագետ Հիւսիսային

ճովակից բղխող, որով պարզուած է բաւարար
 չափով այս հատուածի կնճիւղ: (Géographie
 de Moïse de Corène, texte arménien, traduit en
 fran. par le P. Arsène Soukry, Venise 1881):

Պ

խորենացին վերձանուղների մօտ յամառու-
 թեամբ յարատեւող սխալներից մէկն է Տայ-
 րատալատ բառի թիւր մեկնութիւնը հետեւեալ
 հատուածում: «Քանդի ստացաւ (Ս. Սահակ)
 աշակերտս լաթ սուն ըստ նմանութեան Տայրա-
 տալատայն Սպուղէից, արք կրօնաւորք, խա-
 ռազնագետք և ըն...» (Գ. խթ.): Էմինի նոր
 թարգմանութիւնը կրկնում է հին սխալը գրե-
 լով: «մարտազարքների Սպուղէների նմանու-
 թեամբ» — «Которые во всемъ слѣдовали
 примѣру столичныхъ? Спудеевъ» (Էմին և
 Ստեփանէ): Անկարօտ է ապացուցութեան, որ
 այստեղ Տայրատալատ նշանակում է Տեժ վան+
 ուրեմն և պէտք է թարգմանել Սպուղէների
 վանքի նման: Հետաքրքրականն այն է, որ

այս հատուածը վաղուց արդէն ճիշտ վեր-
ծանուած և թարգմանուած է (ինճիճեան
Հնախօս. Գ. 204. Իտալ. թարգ. „Sotto la for-
ma de' grandi conventi de' Spudei“. Նոր Հայ-
կազեան Բառարան և ըն.):

Այնքան յաճախ է մեր հին մատենագրու-
թեան մէջ ճայրատապառի այս առումը գործա-
ծութիւնը, որ աւելորդաբանութիւն է նոր
օրինակներ բերելը: Սակայն պէտք է դիտել,
որ Սպուզէնների վանքերի հիմնադիրը՝ Աղեք-
սանգրը՝ այդպիսի մի վանք հիմնեց և Կ. Պոլ-
սում, այն է կայսերութեան ճայրատապառ-
բայց Խորենացին չէ ստում՝ ըստ նմանու-
թեան Սպուզէիցն մայրաքաղաքին»:



Խորենացու մէջ շատ որոշ են «Արարաբ»
և «Այրարաբ»: («Գայ հասանէ ի հիւսիսի
յերկիրն Արարաբայ՝ Բերք ի սահման Կարաբայ»
Ա. Ժա): Արարաբը կամ Սարարաբը (ըստ
Փաւստոսի) վանից հարս է, մինչդեռ Այ-

րարաբը՝ յայտնի այրարաբեան՝ կամ ինչպէս
այժմ սովոր ենք առել՝ արարաբեան նահան-
գըն է, վանից հիւսիս: Արարաբի մասին տես
և Խորենացու «դէր» Մծուրնացու մօտ (Սե-
բէսի սկզբում): Բոլոր թարգմանիչները,
նաև Լ. Վինը իւր նոր թարգմանութեան մէջ,
բոլորովին նայնացնում են այդ երկու տար-
բեր անունները, առանց որ և է պատճա-
ռաբանութեան: Այս աններելի է մանա-
ւանդ՝ Ք. Պատկանեանի այդ հարցի ման-
րամասն ուսումնասիրութիւնից յետոյ: Եթէ
համաձայն չեն Պատկանեանի առաջ բերած
ծանրակշիռ և լուրջ ապացուցութեանը,
պարտական էին գտնէ այդ յիշել և իրենց
պատճառաբանութիւնը գնել: Այսպէս է
վարում նաև Հ. Այիշան իւր «Այրարատում»
երևի անտեղեակ լինելով ուսուերէի: (Տես
այս մասին Պատկանեանի արդէն մեծ մա-
սամբ հնացած՝ տշխատութիւնը. Вандіи
Надписи, 1881. Էր. 92—104): Ք. Պատ-
կանեանի առաջ բերած բազմաթիւ վկայու-

Թիւններին մենք կաւելացնենք մի նորը՝ Տիրանուն վարդապետի գրուածքից՝ «Լ. Գ. Տապանն Նոյի ի Կորգուս ի Սարարագ 1) լե- «րինն է, և ոչ ի Մասիս. ի Մասեայ գնացք «աւուրց քսանից, աւելի կամ պակաս. որը՝ «պէս կայ այդ ոչ 2) ի գլխի վասն Թմանուն «լերինն, որ թարգմանի ութ, որ էին ի տա- «պանին ի ձեռակերտին Նոյի. որում 3) հան- դերձեցաւ Յակոբ յԱսորոց գալ տեսանել»:

Ծանօթ. 1. Չեռագրում՝ «ի Կորգուսիս արա- րագ լերինն»:

2. «Որ պէս կայ տ ոչ». Չեռ-ը դ գիմորոշը գը- րումէ յաճախ «, սոյն իսկ պատճառով թերևս ընթեռնելի՝ որ պէս կայ այդ ոչ (?):

3. Հմմտի բուզանդ. Գպ. Գ. գլ. Ժ. Տէս նաև Նորայր Բիւզանդ. Քննասէր, Պրակ Ա, եր. 43— 46, 61—64 և պրակ Բ. եր. 64. (Վկայութիւն- ներ են առջ բերուած Եփրեմի Համաբարբառից, Խորեն Հ ռիփսիմեանց Պատմութիւնից, և այլն). Օտար աղբիւրներ տես Պատկանեանի վերոյիշեալ աշխատութեան մէջ: Տէս և «Այրար». «Այ- րարատ», «Սարարատ» բառերը:

Ա եղեկութիւններ Տիրանուն վարդապետի մա- սին. Չարբան-ը գրում է հետևեալը. «Տիրան. այս մեզի միայն անուամբ ծանօթ վարդապե- տին՝ զըսազրաց ցարհէ Տը (?) մէջ հետևեալ երկասիրութեան կը հանդիպինք հետևեալ խո- րագրով. «Տիրանայ վարդապետի Հայոց՝ պա- տասխանի հարցմանց թագաւորացն Աղուա- նից՝ Ատրներսեհի և Փիբէի». Հատուածք միայն կը գտնուին ի Ստեփանեան բառարանի.» (Հին Ռպ. եր. 763): Երևի այս տեղեկութիւնն առնուած է մեր մայր ցուցակից (Կարինեան հր. № 499, նոր հմբ. 511): Սոյն այս ձեռա- գիրը (Չգօն գիրք № 3) Տիրանունի երկասի- րութեան զլխում հետևեալ վերնագիրն ու- նի՝ որը ցուցակ կազմողից «Երեմի-էլ է. «Տի- րաննոյ (ուրեմն՝ Տիրանուն և ոչ Տիրան) հա- յոյ վարդապետի. պատասխանի հարցմանց թագաւորացն աղուանից Ատրներսեհի և Փի-

պէի“: Գրուածքի սկընաւորութիւնն է. „Աւ-
կալեալ զհրամանս և զինչիրս ձեր յոյժ փու-
թով և յաւերժ ըզձալի փափաքանօք ուրախ
եղեաք ի սմա, իբրև ի պարզևս և ի ձիրս երկ-
նառաքս. .“ Կարձ յառաջաբանից յետոյ՝ ըս-
կըւում են Տիրանունի լուծմունքները կամ
մեկնութիւնները, որոնք յօդուած յօդուած
պատասխաններ են: Հարցումները չկան: Առա-
ջին յօդուածն է. „Ա. Արդ՝ սկիզբն աւուր
առաւօտն և ոչ երեկոյն. . .“ վերջին յօդ-
ուածն է, որով և վերջանում է գրուածքը.
„Ս. Արդ ոչ գիտէին զնա թէ ով է. զի ասէ
Պա է որդի իմ: Իսկ աղանին էջ ի վերայ
Յիսուսի, իբրև ոք զձեռն իւր դիցէ և ասաս-
ցէ. Սա է“:

Հայոց 50 թուին գտնում ենք տեղեկութիւն
Տիրանունի մասին և Մխիթ. Այրիվանեցու
մօտ. „Տիրանուն կաթողիկոս Աղուանից արար
լուծմունք 500 դժար բանից“ (Սպբ. 1867,
եր. 64):

Այսպէս ուրեմն մեր միակ ձեռագիրը ունի

միայն 200 (Մ) լուծմունք, մինչդեռ Այրիվա-
նեցուց առաջ բերուած տեղեկութիւնը ասում
է 500: Ե՛մ: Կարծում ենք, որ այս տարբերու-
թիւնը ծագում է ոչ թէ մեր ձեռագրի պակասա-
ւորութիւնից, այլ բոլորազիր ք և է գրերի
չփոթութիւնից: Երևի պէտք է լինէր „լուծ-
մունք :բձ: դժար բանից“: Բենի և եջի շփո-
թութիւնները շատ յաճախ են, բաւական է
որ բենի զլսի գիծը չտեսնուի, արդէն ստաց-
ւում է եջ (բոլորազրի մէջ մանաւանդ):

Այսպէս ուրեմն՝ ցնոր տեղեկութիւն՝ կարող
ենք ասել, որ Տիրանունը գրել է Եօթնեւորդ
գարի սկզբում ելէ. — հարիւր լուծմունք կամ
պատասխան Աղուանից Ատրնբրսէհ և Փիլի]-
պէ թաղաւորների հարցմունքներին: Այս կամ
սրանց հետ նոյնանուն իշխանների մասին Հ.
Ալիշանը տալիս է հետևեալ տեղեկութիւնը.
«Ա. Գրեւորէ: որդի Փ: Ապրէի, որ յիշի «-րե+
» աստուածապահ և բնիկ տէր Միւնեաց՝ կոչ-
մամբ, կեայր ի կէս Ը դարու. և յետ կիսոյն:
(Միտական եր. 14), բայց սրանից առաջ յիշ-



ուում է մի այլ Փիլիպպոս վեցերորդ դարի Բ կիսում (Միսակ. եր. 17): Աղուանից պատմութեան մեջ յիշուում է Ատրներսեհ — ի — Փիլիպեան. „Չայս Վարազ-Տրդատ և զորդի նորա Ստեփաննոս՝ Ներսեհ — ի — Փիլիպեան ազգակիցն նորա սպան ի միում ժամու ի խորածորն, որ կոչի Գաղոյի վանք՝ (կազանկ. եր. 272. 1860 Մոսկ.): Մխիթ. Այրիվանեցին Աղուանից թագաւորների շարքում ղնում է. . . „Վարազ Տրդատ, Ստեփաննոս, Ապրնեբեհ . . . “ (Հր. 1867, եր. 23): Սրանցից աւելի ուշ ժամանակով յիշուում են Գրիգոր իշխանի որդիքը. „Սևադայ, Ատրներսեհ և Փիլիպպէ“ (Աղ. պատմ. եր. 273): Այս վկայութիւններից պարզ երևում է, թէ որչափ բազմաթիւ են Ատրներսեհներ և Փիլիպպոսներ Աղուանքում և դրակից Միւնիքում, որոնցից մի քանիսի ճիշտ ժամանակը որոշելը շատ դժուար է և անհաստատ: Միւս կողմից Աղուանից կաթողիկոսների շարքում (կազանկ. եր. 274, Մխիթ, Այրիվան. եր.

24.) չէ յիշուում և ոչ մի տեղ Տիրանուն կաթուղիկոս:

Սակայն այս մեր Տիրանունի ժամանակին ճիշտ յարմարուում է „Տէր Յոհան“ կաթողիկոսը, „յեպիսկոպոսութենէ Ամարասայ կոչեցեալ յաթոռն“ (կաղ. եր. 275): Այս Տէր-Յոհանի նախորդներն են՝ Տէր Աբաս, ժամանակակից հայոց թուականին, Տէր Վիրոյ (31 կամ 33 տարի գահակալած), Տէր Զաքարիա (15 տարի), որին յաջորդում է ինքը՝ Տէր-Յոհանը, կամ ինչպէս մենք կարծում ենք՝ Տիրանունը, եթէ միայն վերջինս կաթուղիկոս էր և ապրում էր Հայոց 50 թուականին, ըստ վկայութեան Մխ. Այրիվանեցու: Գահակալում է 27 տարի: Իրանսն և Տէր Յոհաննոսն նունների շիթութիւնը կարող է մեկնուիլ Տէր Աւհան (Սհան) միջին ձևով:

Տիրանունի գրութիւնը մեր ձեռագրում դետեղուած է հետեւեալ դասաւորութեամբ. Ա. Թուղթ Արամայ, Բ. Տիրանուն, Գ. Խոստովանութեան դիր Անանիայի, Դ. Անանիայի

Հայոց վարդապետի սակա բացայայտութեան
[Թուոյ: Այս վերջին երկուսի մասին տես մեր
հրատ. „Գիր խոստովանութեան“: Իսկ „Արա-
մի [Թղթի“ մասին առիթ կունենանք խօսելու:

Մինչև այժմ յայտնի հայ ձեռագրերի ցու-
ցակներից երևում է, որ այս չորս գրուածքն
էլ գտնուել են այս մեր միակ օրինակում:
Հրատարակուելուց առաջ ցանկալի էր նոր օրի-
նակների գիւտը:



„ Խորենացու Պատմութեան Ուսումնասի-
րութեանց “ հէնց առաջին գլխում (եր.
4 — 7) խօսելով մեր հին մատենագրութեան
մէջ յաճախ տեղի ունեցող Լուսնոսէն Բեւոյ
դէպքերի մասին, բերել էի իբրև օրինակ նաև
„Լուսնոսէ Արամազդ“ իւր Լուսնոսէնի մասին
„Լուսնոսէ կամ ճշտագոյն ևս՝ Լուսնոսէ Արա-
մազդ“ ընթերցուածով: Այս վերջին ընթեր-
ցուածով ձեռագրեր այժմ ոչ միայն մի, այլ
մի քանիսն են ինձ յայտնի, որոնց մասին կխօ-

սիմ էրք դէպք ունենամ Խորենացու ինձ
Ծանօթ ձեռագրերի (մօտ 20) Խճէրը և Խճէրի
„Կարս Բաժան-Տնէրը որոշելու: Գիտնական բա-
րեկամներիցս մէկը՝ Նո-Ռն (կեղծ անուն), մի
յօդուած հրատարակեց իմ գրածի առթիւ,
առաջարկելով իւր բացատրութիւնը Խորե-
նացու այդ մութ կէտի վերաբերութեամբ
(տես „Արաքս“ 1890, գիրք Բ. եր. 59 — 62):
Ընթերցողին թողնելով թէ իմ և թէ պ. Մու-
մենի յօդուածներից, խնդրի մանրամասնու-
թեանցը ծանօթանալ անձամբ, այս չափս եմ
միայն ասում, որ Մումենը Սասանեան հարս-
տութեան Որմիղդ թագաւորների անունովն
էր փորձում մեկնել Խորենացու „Ոչ Արամազդ
ոք, այլ ի կամեցողսն լինել Արամազդ, չորից
ևս այլց անուանեցելոց Արամազդ, յորոց մի
է և կուհւդ ոմն (այլ ընթ. Կարարո-Տն) Արա-
մազդ“ ասացուածը (Խոր. Ա. 31): Խորենա-
ցին համեմատում է Տիգրաններին և Արամազդ-
ներին: Բայց թէ Հայկազեան Տիգրանին հա-
մեմատում է անպատճառ „կուհւդ Արամազ-

դի՛հ հետ և ոչ թէ „Արամազդի՛հ“ հետ ընդհանրապէս, այս չէ երևում Խորենացու հատուածից: Մուսնի հետաքրքրական և սրամիտ առաջարկութեան աննպաստ է և այն, որ Խորենացին՝ է՛իէ միայն ժամանակից է Սահակ Բագրատունի՛ն՝ կարող էր գիտնալ միմիայն երեք Որմիզդ թագաւորներին, իսկ Ռ. Գ. և Ե. Գ. Որմիզդներին (6-դ և 7-դ դարում) չէր կարող ճանաչել: Թոյլ տալով նաև այն վարկածը, թէ Խորենացու „չորից՛“ բառը կարելի է կարդալ „երից՛“, թէև դեռ մինչև օրս այդպիսի ընթերցուածով ձեռագիր յայտնի չէ, այսուամենայնիւ խնդրի դժուարութիւնը՝ չէ վերանում: Իրավիճակը Խորենացու զեմանաւորութեան՝ Որմիզդ Սահակ Բագրատունի (262 թ.) և Առաջին Շապուհից անմիջապէս յետոյ յիշում է Մերսեհ (Մարսեհ) և Որմիզդ (երկրորդ) թագաւորներին՝ այսպէս. „Քանզի լուեալ էր (Տրդատայ) վնասմանաւն Շապհոյ ընդ հնդկաց թագաւորին և ընդ արևելեան խաքանայ, և զգորս վարենն Մերսեհի՛ որ և թագաւորեաց ամս

ինն՝ և Որմիզդի՛ որ ապա և նա թագաւորեաց ամս երիս՝ Նահապատիւն-Բագրատունի՛ն“ (Բ. ձթ.): Մարսեհից յետոյ անմիջապէս թագաւորող Որմիզդը անշուշտ Որմիզդ Բ-ն է. (որի թագաւորութեան առաջին տարին ըստ Մեօլդեկէի՛ 302 թ. Tabari etc. եր. 435): Բայց մեր ստորագծած „Նահատակութեամբ՛“ բառը կարող է թերևս ցոյց տալ որ Խորենացուն յայտնի էր մի +ու Որմիզդ, անշուշտ Առաջինի տիտղոսը տալով Երկրորդին:

„Մահատակութեամբքը՛“ մի ասացուած է, որ իմ կարծիքով ճշտիւ համապատասխանում է արաբացի պատմիչների արձարի կամ արձարի և պարսիկ գրողների գիւլէր և Տարքանա (բորլոն էլ +ու Նշանակութեամբ) տիտղոսներին, որ արևում էին Որմիզդ Ա-ին (տես Մուսնի վերոյիշ. յօդ. առնուած Th. Nöldeke, Geschichte der Persen und Araber zur Zeit der Sasaniden &, Leyden 1879, եր. 43, ծան. 2): Մուսնն ենթադրում է, որ առաջ բերուած պարսկերէն երկու տիտղոսները յետին

Թարգմանութիւն են արաբական արաբական կամ արաբական ի և այս բոլորը միասին Թարգմանութիւն են հին պարսկական կարգը (= պարսկ. քաջ) տիտղոսի, որը սակայն, աւելացնենք, գործածուած է միայն Խորենացուց և այն Արամազդի հատուածում և ոչ թէ իւր իսկական տեղում՝ Արմիզդ Թագաւորի կշտին: Այս իսկ պատճառով էլ շատ կասկածելի է թէ երբ և իցէ՝ թէ կուզ հին պարսկերէնից՝ կարգ բառը իբրև Արմիզդ Ա-ի տիտղոս գործածուած լինի, ուստի և Խորենացու մէջ այդ բառը պէտք է հասկանալ իւր սովորական հայերէն և ոչ թէ պարսկերէն նշանակութեամբ: Եթէ միայն, աւելացնենք, այդ „կունդոմ“ բառը չէ աղջատուածը կամ Թարգմանական կրկնակը նախնական „կատար ում“ = „կատարում“ ընթերցուածի, ինչպէս այդ ես ենթադրում էի իմ „Ուսումնասիրութեանցը“ մէջ (Խոր. պատմ. Ուս. Ա.):

Որպէս զի Խորենացին կարողանար Թագաւոր չորս Արմիզդներին համեմատել Տիգրան-

ների հետ՝ պէտք է իւր երկը դրելիս լինէր Եւ Արմիզդից (631 թ.) յետոյ (քանի որ անգիտանում է Ա. Արմիզդի դոյութիւնը), այն է 7րդ դարի առաջին կիսում մի բան որ շատ նպաստաւոր կլինէր պ. Վարիէրի վերջին ենթադրութեանցը Խորենացու պատմութեան գրութեան ժամանակի մասին:

Այս պայ և ուրիշ մի քանի մանր նկատուութիւններ արդէլք եղան ինձ համոզուելու պ. Նումենի բացատրութեանը: Տիրանուն վարդապետի (տես սոյն աշխատութեան § 9) մի հատուածը իմ մէջ նոր մտածմունքների առիթ եղաւ: Տիրանունն ասում է իւր լուծմանց մէջ. „Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, զոր յանցեան յորթն Յրովբովամու և ի Թամուզ, ի պատկերն նախանձաւորութեան (ձեռ. նախանձաւորութեան) ի շուրի-ճուրի, որ կայր ի յանցս և ի մուտս տաճարին սրբութեան, զոր հայք Ար. Կարգ և այլք Գևս ասեն“ (ՃՄԳ):

Այս հատուածից պարզում է երկու բան.

ա) որ ասորոց Թամուզը հայերը կարող էին թարգմանել և Արամազդ, բ) որ Թամուզը (ուրեմն և թարգմանութեանց մէջ՝ Արամազդը) ընդ գեմքով էր: Սուրբ Գրքի մէջ Թամուզը յիշուում է մի անգամ միայն յականէ-յանուանէ. «Եւ եմոյծ զիս առաջի զրան տանն տեառն, որ հայեր ընդ հիւսիսի. և ահա նստէին անդ կանայք և ողբային զԹամուզ» (Եզեկ Լ. 14): Թամուզին են ակնարկում և հեռեեալ ասացուածները. «կացոյց զիս ի նախագուռն զրանն ներքնոյ որ հայի ընդ հիւսիս, ուր էր արձան պատկերին նախաձայն ստացողին» (նոյն. 3): — «Եւ ահա ի հիւսիսոյ կողմանէ ի վերայ զրան սեղանոյն ուր կայր պատկերն նախաձայն ի մուտս զրանն որ հայեր ընդ արեւելս» (նոյն. 5):

Խորենացուց ասում, հինգերորդ դարի ասորական թարգմանութեանց մէջ, Եփրեմ Խուրին է յիշում ընդ գեմքով պատկերը (= Թամուզ). «Որթ յանապատին... և պատկերն չորեքդիմի՝ Մանասէին» (Համարարբ.): Մի ու-

րիշ տեղ. «Ուղղեաց (Մանասէ) զպատկերն ընդ գեմքով ի տաճարին տեառն» (Եփր. մեկ. Մնաց. զԿ. Գ. Վենետ. 1836 Տարեկարգութեամբ Ընդ հաս. Ա. եր. 490): Յիշում է և Բարսեղը. «Մանասէ զընդ գեմքով զկուռնն ի տաճարին աստուծոյ եղ, զի ուստի արդեօք և եկեսցէ ռք, կուռնն երկիր պաղցէ» (Բարս. Ճառք ապաշ. տես Հայկ. բռք.): Կան և Խորենացուց յեւոյ ընդ գեմքով կուռքը յիշողներ, ինչպէս օր. Ներ. Շնորհալին (Յիսուս-Որդի) և ընդ և ընդ: Բայց Տիրանունն է իմ զիտեցածովը, որ առնելով Եփրեմի Համարարբուից անապատի «որթի» և նախաձայնութեան ընդ գեմքով պատկերն յիշատակութիւնը ի միասին, աւելացնում է նաև՝ Թամուզ անունը Արամազդ թարգմանութեամբ:

«Ուղղահարապէս կարծուում է թէ Թամուզ էր Փիլենիկեցոց Ադոնիսը և թերևս Եգիպտացոց Ոսիրիսը: Ադոնիսի առասպելեալ մասն ու յարութիւնը, որ կարծուում է թէ նշանակ էր ա-

րեղական մեկներուն և դառնալուն, տօնուով էր ամառնային արևադարձի ժամանակ, նախ ողբերով և ապա ուրախութեամբ և անառակ խնջոյքներով» (բառար. Ս. Գրոց, Կ. Պոլիս 1891):

Մեր ձեռագիր չի բառարաններն էլ տալիս են «Թամուզն Ադոնիս է» մեկնութիւնը (տես. ցուց. Գեորգ Կաթ. № 37): Չունիմ ձեռքի տակ այս խնդրի մասին նոր զիանական գրքեր՝ խնդիրն աւելի ճշտելու համար:

Սակայն գոնէ ինձ համար պարզ է, որ այս կէտուամն էլ Խորենացին, ինչպէս միշտ իւր աղբիւրներում, օգտուել է ս. հարց գրուածքների, վկայաբանութիւնների արբազրական (hagiographie) երկերի հայ Թարգման-Են-նէրէց: Եթէ միայն Արամազդի հատուածը յետին ընդմիջարկութիւն չէ: Հայոց մեծ Արամազդին մօտ դնում է չորից ևս «յոց անուանեցելոց Արամազդ (=Թամուզ)», յորոց մի է կունդ ոմն Արամազդ: Հաւանական է, որ Թամուզի չորս դէմքերը տարուայ չորս եղանակներն էին պատկերացնում որոնցից մէկը կարող էր լինել Կոնստ

(ձեռք), կամ լաւ ևս Կոնստանտինոպոլիս, որ մի ակնարկութիւն կարող էր լինել Թամուզի այս կամ այն կերպարանափոխութեանը կամ յարմարութեամբ: Այս կէտը կպարզուի Թամուզի աւելի մօտաւոր ծանօթութեամբ, եթէ միայն հաստատուին իմ այս ենթադրութիւնները:

⸗

Խորենացու խրթին ասացուածներից մէկն է մնացել մինչև այսօր «զարտախուրի» հատուածը: Եթէ այստեղ համառօտակի կամենայինք ամփոփել բոլոր այն բացատրութիւնները կամ լաւ ևս բացատրութեան փորձերը, որ մինչև օրս եղել են, կստացուէր մի ահագին մենազրութիւն (մոնոգրաֆիա): Ընթերցողը կարող է իւր հետաքրքրութեանը բաւականութիւն տալ, եթէ կամենում է այս հարցի պատմութեանը ծանօթանալ, դիմելով փակադրածեալ աղբիւրներին: [Հայկ. բառ. «արտախոր», «խաւարտ», «տից», «խաւարձի» բառերը բոլորն էլ մեկնուած ինչպէս բոյս: Հ. Ստեփանէի աշխարհաբար Խորենացու 156 մեծ

ծանօթութիւնը, որտեղ առաջ են բերուած Էմինի, Ֆլորիւալի, Մխիթարեանների, Ուխտոն եղբայրների, Լանգլուայի, Լաուէրի, Ք. Պատկանեանի, Լադարզի, Գ. Խալաթեանի և այլն կարծիքները: Ք. Պատկանեանի Mat. для Армян. слов, вып. II, եր. 44. Էմինի Բ. Թարգմանութեան 101 ծանօթութիւնը (նոյնը և առաջին Թարգմանութեան մէջ): Պ. Գր. Խալաթեան իւր այս հատուածի բացատրութիւնը կրկնեց և նորերս. Zur Erklärung der Armenischen Geschichte des Moses von Chorene, von Gr. Chalathiantz, Wien Zeitch, f. Kund. d. Morgenl. 1893, I. Սրանց վրայ պէտք է աւելացնել և պ. Եփ. Գաւթեանի «Արձագանքում» (հմր. ?) հրատարակածը, որն և յետոյ (1891, օգոստ.) առանձին նամակով ուղարկել էր ինձ, խնդրելով յիշել իւր բացատրութիւնը իմ «Ուսումնասիրութեանց» մէջ: «Տենչայր Սաթենիկ» հատուածը մանրամասն տարրալուծուելուց յետոյ Թարգմանուում է այսպէս. «Սաթենիկ տիկինը սաստիկ

ցանկանում էր բռնել կամ փայփայել Արգամայ սամրապատ (սամուրով պատած) խոյրը և նրա թաւշեայ բարձերի փունջը»: Պարոնի բացատրութիւնները չափազանց կամայական են և ինձ թւում է թէ բողբոլփին անհիմն: Պ. Մկ. Պալեան «ի բարձիցն» հասկանում է «բարձուկք = բլուրներ» որոնց վրայ պիտի բուսնէին յիշուած բոյսերը (անտիպ աշխատութիւն): Ալինին անշուշտ և ուրիշ բացատրութիւններ, որոնց ես չեմ հանդիպել կամ մոռացել եմ:]

Բոլոր բացատրութեանց մէջ մի բան միայն հաստատ է, որ Խորենացու այդ հատուածը «իւրահարուստ երգ է, և այդ էլ զխտեք» որովհետև ինքը պատմահայրը մի ուրիշ տեղ այդ մեզ ասում է. «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան. շինել զքաղաքն, և խրնամութիւն ընդ Ալանք և ծնունդք զարմիցն, և իբր պրփռն Սաթինիկան ընդ վիշապազունսրն՝ առասպելաբար...» (Բ. խթ):

Թեթև ակնարկն անգամ բաւական է Ա և Բ դասերի մեծ տարբերութիւնը նկատելու համար:

Բ դասը չունի «եւ», «կէ» բառերը, և որ աւելի նշանաւոր է, ունի մի աւելորդ բառ՝ հա-ասար: Այս վերջինն է ամենաբնորոշ կէտը: Բ դասի տարբեր ընթերցուածները չնչին են և տեղիք չեն տալիս որ և է ստորաբաժանման: Տեւէս, արգասանս ընթերցուածները, որ իրենց նմանն ունին և Ա դասի մէջ, լոկ ուղղադրական ձևեր են (բաց է թողուած չհնչուող յ տառը ըստ սովորութեան նախնի այն մեծ դպրոցի ուղղադրութեանը, որ գեղջուժ է բոլոր չհնչուող յ տառերը: Այդ ուղղադրական դպրոցի մասին մենք առիթ կուենանք ի մօտոյ երկար խօսելու):

Ա դասը իւր տարբեր ընթերցուածներով երեք որոշ ստորաբաժանում ունի, որոնցից առաջինը (Ա ա) 2 ձեռագիր (№ 249 և 1661), երկրորդը (Ա բ) 3 ձեռագիր (№ 248, 1663, 1668) և երրորդը (Ա գ) 6 ձեռագիր (№ 611, 615, 1662, 1664, 1666, 1667): Բայց այս խմբերի Վասին ուրիշ անգամ:

Բ դասին է պատկանում Կարինեանցի համեմատած երկրորդ օրինակը առանց որ և է նոյն իսկ մանր տարբերութեան (տես Բաղդատութիւն Կարինեանցի 1853, եր. 50 բ. սիւնակ): Բ դասին է պատկանում և Խորենացու Առաջին սպազրութիւնը 1695 թուին, «Յամն աէյօդամի»: Նաև 1752-ի սպազիրը, արտատրպութիւն առաջինի: Ա դասին են պատկանում Կարինեանցի «...» օրինակը և Վենետիկեան 1843-ի սպազրութեան բոլոր վեց օրինակները, եթէ միայն բոլոր ընթերցաններն նշանակուած (որ հազիւ թէ, և այն առանց որոշելու թէ որ ընթերցուածը որ ձեռագրից է): Ա դասին է պատկանում նաև իմ և պ. Մառի բաղդատած ձեռագիրը (տես Изъ лѣтней поѣздки въ Арменію. Записки Восточн. Отдѣл. Имп. Руск. Археолог. Общ. Том. VI, 135—228): Արդէն նկատեցինք, որ Ա դասը նշանաւոր և անհրաժեշտ ստորաբաժանումներ (խմբեր) ունի:



Այժմս գանք մեր բացատրութեանը:

Ժ-դ դարի գրող Արամը—մի բողոքողին նոր անուն մեր հին դպրութեան մէջ—Խորով Անձևացու վարժապետը, իւր մի գրուածքում (տես այս աշխատութեան § 9 և § 10) բերելով Բաբելոնեան հնոցի օրինակը ի միջի այլոց ասում է «... զի թէ ոգին ոչ իցէ երկրպագու փառից մարմնոյն՝ թէպէտ և կապեալ ի արհարութեանէ գտանի առ բռնութիւն բանասրկուին և ոչ կարէ շիջուցանել զհոյրն ցանկութեան այլ միայն աղաղակէ առ տէր՝ ոչինչ վնասի յախտից մարմնոյն, զի տէր ձեռնկալու է նորա. զի մերկանդամ ոչ է արկեալ ի հուրըն) այլ պարտէ՞ման հաւատոյն ընդ իւր է) և վարտէ՞տ ապաշխարութեան զտուականս մեզայն ծածկեալ է) և ԶԲԱՐՁՍ՝ սրբութեանն ԱՐՏԱՍՈՒՐԱԿԵԱԼ. նմա ոչ կարէ հուրն զամագիւտ լինել) և այլն»:

Ահա մի գեղեցիկ վկայութիւն, որի մէջ հանդիպում ենք միասին Խորենացու երկու բառին՝ «բարձ և արտախուրին»: Վարտիքով ա-

ռականքներն են ծածկուում) իսկ արտախուրով կամ արտախուրակով՝ բարձերը արտախուրակուում:

«Արրութիւնը» ասում է Արամը՝ արտախուրակում է բարձերը, ինչպէս որ ապաշխարութիւնը որպէս վարտիք առականքներն է ծածկում»:

Արամի այս ասացուածը, ինչպէս տեսանք, Բաբելոնեան հնոցի պատմութեան նմանութեամբ է յօրինուած: Եւ, յիշելի՛ «երից մանկանց» համար ասուած է Ս. Գրքում. «Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պարտէ՞տ և վարտէ՞տ, արտախուրակ և զանկապանտ և իւրեանց) և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ» Իսնիէլ, գ. 21:

Այս օրինակում արտախուրակը դրուած է վարտիքի և զանկապանների միջև և ակներև է, որ բարձերի արտախուրակ է և ոչ թէ գլխի: Յունարէնի համեմատութիւնը սխալ հասկացողութեան պատճառ է դարձել (tiara = խոյր) գլխի կամ թագի արտախուրակ): Յայտ-

նի է որ մեր Աստուածաշունչի թարգմանութիւնը շատ կէտերում տարբերում է Եթովպիանից թարգմանութիւնից և մերձենում է ասորականին կամ երբայական բնագրին: (Այս մասին տես նաև Պոլսի նոր հրատարակութեան (1892) յառաջաբանը):

Ս. Գրոց մասնագէտներին, մասնաւորապէս երբայագէտներին, թողնելով այս հետաքրքրական կէտի մանրամասն համեմատութիւնը, զնենք այստեղ եֆրայական բնագրից հայ աշխարհիկ թարգմանութիւնը. «Ան տտենը աս մարդիկը իրենց անդրալարիւններովը. բաճկանն: րովը. վերադիւններովը ու (ամեն) հանդերձներովը կապեցին ու բորբոքած կրակի հնոցին մէջը նետեցին» (Կ. Պոլիս, 1884): Ինչպէս տեսնում ենք երբայական բնագրում, ինչպէս և հայ հին թարգմանութեան մէջ ըստ Արամի հասկացողութեան, չկայ գլխարկի, գլխի արտախոյրի կամ արտախուրակի հետքն անգամ: Այսպէս է նաև բոլոր այն թարգմանութեանց մէջ, որոնք երբայական բնագրի հե-

տւում թեամբ են: (Որին. „Et aussitôt ils furent enchainés, et, avec leurs habits et leurs chaussures, et tous leurs vêtements, jetés au milieu de la fournaise du feu“ Paris, 1846). Արամի նման են հասկանում և մեր հին մեկնիչները. «կապեցան վարտեօք և քարնէն հանդերձն» (Վարդան, Մեկն. Գանիէլ. տես ՀՅԿԳ. Բռ.):

Այսպիսով ուրեմն՝ արտախուր կամ արտախուրակ նշանակում է. 1. ընդհանրապէս ծածկոյթ, ծածկոյթ խորանին տես ՆԼից ԼԶ, 19, Ե, 17, Թուոց. Գ. 26: 2. գլխարկի կամ թագի արտախուր. (Ագաթ. ՀՅԿ. բռ.): Ինչպէս են և ցայսօր պահուած եկեղեցական զգեստաւորութեան մէջ եպիսկոպոսական թագի արտախուրակները, որոնք թագի ետևի եզրից կախուելով անցնում են վակասի տակով և հանգչում շուրջառի թիկունքի վրայ: Հնումը գործածուող իշխանների և թագաւորների գլխարկի արտախուրի պատկերը, իմ կարծիքով, պահուած է մեր «փղոսկրեայ աւետա-

րանում», տես նաև Վիեննայի հրատարակ, «մոզերի երկրպագութիւն» պատկերը, Das Etschmiadzin — Evangeliar, von D-r Josef Strzygowski, 1891, էր. 23), Կան նման պատկերներ և մեր միւս ձեռագրերում: 3. բարձերի արտախուրակի, ինչպէս տեսանք վերևում առաջ բերուած օրինակներում և ինչպէս դեռ պիտի տեսնենք ներքևում: 4. իբրև մոլորակի անուն (լուսնիթաղ?, երևակ?): Զքր. կաթ. է Զարգարան. Հյկզ. բռ.:

Իսկ իբրև բոյսի անուն, կամ «բանջար վարսաւոր» և ոչ մի վիպութիւն ունինք, բացի Խորենացու այս թիւր ըմբռնուած հատուածից:

Ինձ յաջողուեց ոտքերի բարձերի արտախուրակի վիպութիւն գտնել և Սեբէոսի մէջ, որը անշուշտ մինչև այժմն հասկացւում էր իբրև գլխի արտախուրակի (Պատիանեան — Թարգմանում է ҫаҫма): Սասանեան Խոսրով (անշուշտ Բ-ը, 590 թուին գահակալած) մեծ փառքի և պատիւների է արժանացնում Սըւ-

բատ Բաղրատունուն (Պուրղան կամ Վրկան մարզպան), տալով հեղահեռէ աւելի և աւելի բարձր պարգևներ: Առաջ բերենք Սեբէոսի հատուածները փոքր ինչ ընդարձակօրէն.

— « Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հա-
« ճոյանալ Սմբատայ Բաղրատունւոյ յաչս Խոս-
« րովու արքային. տայ նմա զմարզպանութիւն
« երկրին Վրկանայ, առնէ զնա իշխան և ի
« վերայ ամենայն կողմանն այնորիկ. ընու զնա
« ոսկւով և արծաթով, զարդարէ ի հանդեր-
« ձրս պատուականս և երևելիս: Տայ նմա զկա-
« մարն և զսուսերն լեալ հօր իւրոյ Որմղլի.
« զումարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկս և
« զհայաստանեայս, հրամայէ զնալ յերկիր
« իշխանութեանն իւրոյ» (Գլ. ՓՊ. էր. 59):

— « Յայնժամ առաքէ առ նա թագաւորն
« հրովարտակ մեծապէս զոհութեամբ, պա-
« տուով մեծացուցանէ՝ ի վեր քան զամենայն
« մարզպանս իւրոյ տէրութեան առնելով, և
« զամենայն անաւթս մատուակացն առաքէ
« նմա ոսկի և հանդերձս թագաւորականս՝

« արքայութեան ասիւրացիք և զանգաղանակ ա-
 « կամքք և մարգարտովք կարգեալ » (ԹԼ,
 եր. 63):

— « Յայնժամ տայ նմա արքայ զտանու-
 « տէրութիւն, որ անուանեալ կոչէր Խոսրով
 « Շում (Շնումն). զարգարէ ի չքնաղս՝ ի Գ...
 « և ի պատմութեանս բեհեզեայս յոսկոյ աւ-
 « ծեալ. մեծացուցանէ ահազին պատուաւք ի
 « ճամբար ականակապ և ի զումարտակ և ի
 « զահս արծաթիս. արձակու (sic) ի նա զվա-
 « ճառն փոքր՝ զղիւան աշխարհին: Տայ նմա
 « զփողն չորեքձայնեանս և պահապանս զը-
 « րանն նորա ի հեռեակաց արքունի, զումա-
 « րէ նմա զաւր մեծաւ ահեղութեամբ յարեելս
 « յերկիրն Քուշանաց, և հրամայէ նմա առ-
 « նել մարգպան՝ զոր ինքն կամեսցի » (ԹԼ,
 եր. 65):

Այս վիպութիւններէից պարզ երևում է որ
 արտախուրակները և գտակը բոլորովին տար-
 բեր բաներ են և սրւում են պարզ և զանա-
 զան ժամանակ, միմեանցից ջոկջոկ: Այլ ար-

տախուրակը յիշում է զանկապանի հետ, որ
 այլ ևս փարատում է որ և է կասկած: Ան-
 շուշտ այս տեղում էլ բարձրի արտախու-
 րակներ են:

Այժմս մեզ համար հասկանալի է թէ ինչ
 ակնարկութիւն է — «Տենչայ Սաթենիկ տեն-
 չանս՝ զարտախուր... ի բարձիցս Արգաւա-
 նայ»:

Ման բամբասակ երգեր, որոնց նիւթն էր
 անդրափարտիքը, ոչ միայն այժմս մեր ժողո-
 վրդական բանաստեղծութեանց մէջ կան, այլ
 և այդպիսիներ յայտնի են միջնադարեան եւ-
 րոպական ազգերի մէջ: Արտախի «փողը» կամ
 «փողքը» որի միջով անցնում է «փողկապը»
 (ուչխուրը), էր (և է այժմս ժողովրդի մէջ) մի
 գրպան, որտեղ պահուում էին մանր մուկեր
 բաներ, ընծաներ կանանց համար, միրգ և
 այլն:

Ռոբանդի նշանաւոր գիւցազներդութեան մէջ
 երբ Բուամիմունեդ թագուհին Գան կոմսին ըն-
 ծաներ է տալիս կոմսուհու համար՝ կոմսը

այդ ընծաները (ոսկի, յակինթ և այլն) զնում է իւր վարտոց մէջ. il les ad prises, en se hoesse les bute. La Chanson de Roland, chant I). Ծանօթութիւնն աւելացնում է. On serroit dans ses chausses (heuse, houseaux: les menus objets, ճիշտ այնպէս ինչպէս մեր մէջ: Մասնաւորապէս ասպետների սրբերի սովորութիւնն էր այդ «փողի» մէջ նարինջ պահել իրենց պաշտած տիկիներին ընծայելու համար: «Փողկապի» հանգոյց ընկերը, որ մեր նախապաշարմանց համեմատ զրկում է մարդուն առնական զօրութիւնից, նոյնպէս կայ և արեւմտեան ազգերի մէջ (aguillette nouée: Տես տեղեկ. Ֆրանսական braguettes կամ brayette և Haut — de — chauses զգեստների մասին, նաև բազմաթիւ բամբառակ երգեր և ակնարկներ ճիշտ Խորենացու հասուածի մշտքով Rabelais: Gargantua, chapitre VIII, chap. XXXV, XI, Pantagruel, chap. V. livre II, chap. XVIII livre III, chap. VII և այլն:

Այսպիսով կարծեմ վերջնականապէս որոշ-

ւում է «որտախուր» և «բարձ» բառերի նշանակութիւնը: Գանք միւս բառերին:

«Լ զտից»-ը մեր ձեռագրերի մէջ ոչ մի ասրբեր ընթերցուած չունի, միայն պէտքէ նկատել, որ միշտ զրւում է «Լ» և ոչ «Ե», և շատ անգամ բոլորովին կպած յաջորդ բառին՝ «Լ զտից»: (Մեր ձեռագրերը 16-դ և մեծ մասամբ 17-դ դարի գրուածքներ են) վենետիկցիներինը և ուրիշ տեղ դանուած ինձ ծանօթ ձեռագրերը նոյնպէս հնադոյնն է համարում վենետիկի 201 — 1303 թուինը, բայց դրա էլ մանր ընթերցուածները ծանօթ չեն: Շատ աւելի հնադոյն ձեռագիր է յիշում Սրուանձատեան (Փորոս Աղբար, Արդնիի բարձրահայեաց ս. Աստուածածնի վանքի մատենագ. N. 211 Մով. Խորենացի, Սա. Տարօնեցի) Արիս. լաստիվերացի, Եւսերի պատմութիւն եկեղեց. տասն դարութիւնք), «զրեալ ի գոնոյ վանք, ի թվին Մ. Ժ. Է.» եթէ միայն այս թիւը տպագրական վրիպակ չէ (Ռ. Մ. Ժ. Է.): Դր. Բելքի ինձ կրածը՝ թէ տեսել է խմբում:

Ախթամարում շատ հին խորենացիներ՝ այն-
քան էլ վստահելի չէ՝ քանի որ պարոնը բո-
լորովին անտեղեակ է հայերէնի և ուրիշներից
լրածը կամ նրանց կարծիքը կարող էր հա-
ղորդել)։

Միակ տարբեր ընթերցումը տալիս է
Սանահնի ձեռագիրը՝ «և տից»։ Տե՛ղ իբրև բոյ-
սի անուն մի բոլորովին անփաստ և ձրի եւ-
թադրութիւն է։ Այս իսկ պարագաներից ստի-
պուած ես ինձ թոյլ եմ տալիս ենթադրել
որ այդ «և զտից»-ը կամ «և տիցը»-ը մի աղ-
ջատուած բառ է և որի նախնականն է
«*զտից»՝ որը կարդացուել է «*ղետից» և յե-
տոր միայն «և տից» կամ «և զտից»։

Գրքի բառերիցն է՝ խորենացու-
մէջ զոր ծածուկած ինքն (Բէլ) գլխանոց
ազուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և
տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահ-
պանակս Բաբելց և բազկաց, դօտևորեալ զմէջ-
այն, և յահեկէ գործն երկնայրի և նիզակ
անարի (տպ. նիզակն արի) ի ձեռն իւրում

աջոյ, և այլն» (Ա, Ժա)։ Մեր հատուածումն
էլ շատ յարմարուում է այդ բառը. «Տենչայր
Սաթենիկ... զարտախուր զտից ի բարձիցն Բր-
զաւանայ»։ Արտախուրը՝ եթէ, ինչպէս ան-
սանք՝ վարտիքի վրայից հազնելու զգեստ
կամ զրահ էր՝ պէտքէ լինէր բարձերի և ե-
տեի կողմից զիստերի վրայ, ինչպէս հին-եւ-
րոպական զրահի cuissard-ը։ Իսկ վարտիքը,
զիանք որ, թէ մեր և թէ եւրոպացիների
մէջ, այլ և հնումը՝ էր. «ի միջոյ և ի վայր,
ծածկոյթ երանաց և բարձից» Հյկ. բռ.։ Մը-
նում են «խաւարտ» և «խաւարժի» բառերը։
Խաւարտը թէ բանջար է նշանակում այդ
անկասկած է, ունինք (և ես էլ ժողովել եմ)
շատ հին ու նոր վկայութիւններ։ Բայց «խա-
ւարտը» նշանակում է և Խաղա-արտ = ու-
ռուցք, պալար և այլն, տես «Հին բառ. ձե-
ռագ»։ Եթէ Խա-արտը չէ ընդմիջարկութիւն
թերևս ուրիշն նշանակէ, բայց Բ զասի բո-
լոր ձեռագրերի «հաւասար» բառը իմ կար-
ծիքով ցոյց է տալիս, որ Խա-արտը անպայ-

ման ընդմիջարկութիւն է, լու սանցքից մտած: Եւ այս աղջատուած բառին կից եղած «~~խառն~~» խառն իբրև բոյս հասկացուելով, տեղիք է տուել և մոռացուած արտասուեր բառը մեկնելու. մանաւանդ որ այս բառը շատ նման է հընչում չլսուեր, նեխուեր, զարտա (զարտա փլաւ) և պարսկ. զարտասուար (Լագարդ Arm. Stud. 53.) բառերին: Զեռագրերով զբաղուողներին յայտնի է թէ ինչպէս են գրուում լուսանցքի մեկնութիւնները: Գրուում է մի հաւասարութեան նշան բնագրի բառի վրայ և մի ուրիշը լուսանցքում, որին կից կամ որի տակը գրուում է մեկնութիւնը կամ թարգմանութիւնը: Գծբաղդաբար միևնոյն նշանը գործ է ածուում՝ երբ բառը «խառն» է և պէտք է այդ փոխարինենք լուսանցքի ուղիղ բառով, և կամ երբ մի բառ «խառն» է և պէտք է լրացնել լուսանցքում գրուածով: Այստեղից և ահողին շիոթութիւններ ձեռագրերի մէջ: Դաստ անգամ մեկնութիւնն ընդունուում է իբրև պակաս բառ և ներմուծուում է բնագրի մէջ: Աի-

նում է և աւելի վատ: Բնագրի ուղիղ բառը դուրս է ձգուում և փոխարինուում է լուսանցքագրութեամբ: (Տես լւմ «Խոր. Պատ. Բւ.» դւ. Ա. Բ. Գ.):

Մեր այս դէպքում իմ կարծիքով լուսանցքագրութիւնը մտել է բնագրի մէջ, մեկնուած բառի կողքին: Բարեբաղդաբար Բ դասի բոլոր ձեռագրերը պահել են և հաւասարութեան նշանի իմաստը «~~խառն~~» խառնութեան մինչդեռ Ա դասի ձեռագրերը ըստ սովորականին ուղղակի ներմուծել են, առանց որևէ յիշատակութեան: Անշուշտ այս ընդմիջարկութիւնները պատահել են երկու տարբեր ձեռագրերում, որոնցից և այժմեան երկու դրլխաւոր դասի ձեռագրերի օրինակներն են ծագում: Այս իսկ պատճառով Բ դասի ընթերցուածը եւ ընտրելագոյն եւմ համարում իբրև ընդմիջարկութեան հետքը պահող ընթերցուած, մինչդեռ Ա դասը անհետացրել է այդ հետքն անգամ:

«Խառնարծի» կամ «հաւարծի» բառը

ընկ ուղղագրական տարբերութիւն—խաւարտի նման յայտնի բառ է և վկայութիւններ ունի նոյն իսկ Ե-դ դարից և նշանակում է կալո-դ, թերևս և՛ խաւոտ. (ՀՅԿ. բառ.): Կարծում եմ թէ այս բառը նոյն) գեռ չբացատրուած, կազմութիւնն ունի) ինչ որ Խա—Խա—արձի, այսպէս և Խա—Խա—արձի: Կամ թէ չէ՛ այս էլ լուսանցքից մտած բառ է և դրոշմ աղջատուած բառը լուսաբանելու համար, ինչպէս որ Խա—արջ վերևում: Մանաւանդ որ Հին բառգիրքը (ցուց. Գէորգ կթ-սի № 39) Խա—արջ մեկնում է այսպէս. «խիար կամ խաւարծիլ զոր իշխուն ասեն», ուստի և հաւանական է որ «հաւասար խաւարտ, խաւարծի» միասին զրուած էին լուսանցքում իբրև մեկնութիւն «զարտախուրի» և յետոյ միայն) բնագրի մէջ մտնելիս անջատուեցան:

Այսպիսով ուրեմն կատանանք հետևեալ լուսաբանուած բնագիրը.

«ԱՂ և տենչայ (ասեն) Սաթենիկ (տիկին) տենչանս՝ զարտախուր [հաւասար խաւարտ]

* զստից [խաւարծի] ի բարձիցն Արգաւանայ»:

— Տիկին Սաթենիկը ցանկանալով ցանկանում է Արգաւանի բարձերից՝ զիստերի արտախուրին: Իմաստը պարզ է:

Սաթինիկ և Սաթենիկ ձևերից երևի հրնադոյնն է Սաթենիկ: Իսկ Սարթենիկը եթէ միայն բէն յետասանու չէ, թերևս աւելի ևս հին է և այս դէպքում կարծեմ հնարանոր է ժողովրդական արտասանութեամբ մեկնել՝ սարթենիկը իբրև սարդենիկ, իսկ սարդենիկ = սարդենի, սարդենիներ, ինչպէս որ Վարսենիկ = վարսաւոր, վարդենիկ = վարդենիք՝ վարգենիս» Հ. Բ. տես և դարիձենիկ = զարիսենի (ՀՅԿ. բառ.):

Այս դէպքում Սարթենիկ կարելի է մեկնել իբրև Laura, արևմտեան բանաստեղծներից այնչափ երգուած Լաուրան: Յայտնի է որ՝ բոյսերի, ծաղիկների, գոհարների անուններ էին մեր կանանցից շատերի անունները:

Վերջացնենք մեր խօսքը տալով մի քանի տեղեկուժիւն խաւար ծիլի մասին, որ Խորենացիին մեկնողները ընդհանրապէս նոյնացնում են խաւար ծի բառին հետ: Խաւար ծիլն հանգիպում է և խոր ծուխը խաւար ծիլ և այլն ձևերով (Հյկ. րո.) բայց երբէք՝ խաւար ծի: Լեհացու բառարանի տուած մեկնութիւնը յայտնի է (Հյկ. բու.): Հին ձեռ. բառարանները մեկնում են. «իշխուն խոտն է»: Հայկունին իւր ժողովածուի մէջ գրում է (անտիւ): «խաւար ծիլը՝ որ կարնեցիք իշխուն կըսեն, ընտիր, քաղցր ու թթուաշ կանանչ մ'է, որ սարերը կաճի, ձեան բարձրանալու միջոցին: Արմատից դըդմի տերևի նման տերև կըուսնի, որոց միջից կբարձրանայ, ըստ ալաշկերտցոց «որձան», որ կէս կանգուն բարձր և տափակ է: Վերայի կեղևը քաշեն, կհանեն, կուտեն (ոչ կեղևը): Գդմի նման թաւոտ է. Ծայրը ունի մանր ծաղիկ, Ալաշկերտի խաւար ծիլը շատ համեղ է»: Հայկունին առաջ է բերում նաև այս հանելուկը.

- « Հանելուկ, հանմանելուկ,
« Ծէրն ի ծաղիկ, տակն աւելուկ,
« Թէ հանես՝ ծէրըն ուտես,
« Թէ չհանես: տակըն ուտես»:

(Խաւար ծիլ).

Պէտք է նկատել, որ «որձա» բառը գործ է ածուում ոչ միայն խաւար ծիլի այլ բոլոր բանջարների ցողունի համար. այս բառին ազգակից է և արդու մցիների «որձուլա» բառը (= արու բոյս, աղջիկ որ կանացի չէ) այլ նմանում է բնութեամբ կամ վարմունքով այր մարդու, = կոպիտ): Վէպի խաւար ծիլն (եթէ միայն նոյնանիշ է խաւար ծիլի և չէ ընդմիջարկութիւն) չէ՞ արդեօք ակնարկութիւն առնանդամի:



Տեղեկութիւններ Արամի մասին (Թ. դ. դաս-րի դրոյ): Այլ և Անանիա Մոկացու մասին:

Արամի անունը մեր «Հին Գալլութեան» պատմութեանց մէջ մտած չէ դեռ ևս: Այս գրողի միակ մի երկասիրութիւնն է ինձ յայտնի և այն միայն մի ձեռագրում (տես § 9): Այդ գրուածքի վերնագիրն է. «Թուղթ Արամայ. Զոր գրեաց պատասխանի Ատումոյ Անձաւացեաց իշխանի ի սակս պէսպէս հարցմանցն»: Գրուածքի սկզբնաւորութիւնն է. «Աստուա-« ծապահ և աստուածասէր իշխանիդ իմոյ մե-

« Ծագահի. Ա՛ճատունկ իմաստիցդ զիր և
 « հրաման եհաս առ իս. զոր ընթերցեալ յո՛յժ
 « ուրախ եղէ զայ՛, որ բազմաշառաւիղ հա-
 « ւատոց քոց և հոգեհանձար խոհականու-
 « թեանդ՝ զպտուղ խոնարհութեան շնորհաց
 « առ ընդունելոյ զաղքատիմաց իմոյ զճառս
 « ողբերգութեան առ աղէտս մանկանց եկեղե-
 « ցոյ կենդանաբաժին որբութեամբ օտարա-
 « ցեալ յերկնային մեծութենէն, որ ի տան
 « տեառն սնդեալս և ի գաւիթս աստուծոյ
 « ծաղկեալս. նաև որ զփշոցն մեղաց զզանա-
 « զան տեսակս խոնարհեցայք հարցանել ցիս.
 « Թէ որպէս իմանի տարբերութիւնք ն՛ց և
 « թիւնաւորութիւնք յերկարավէրք. որպէս
 « հնար է զբազմացն խայթոց՝ ի մարմին ժո-
 « ղովեալ՝ որոնել, ըստ մտիցն առնել և զերնս,
 « զի համբերել կարասցէ ցաւոցն »:

Գրուածքի վերջաւորութիւնն է. « Եւ որ
 « զջուրն ի գինի փոխեաց՝ զձեր արտմուծիւ-
 « նըդ յուրախութիւն փոխեսցէ, ի տէր խըն-
 « զալ ձեզ ի տարեկանն կենդանութեան սո-

« նըս կատարել »: (Ձեռ. Բերթ 407—416):

Գրուածքի լեզուից և մի քանի ուրիշ հան-
 զամանքներից ես արդէն ենթադրում էի, որ
 Արամը պէտք է գրած լինէր Թ-դ դարում
 երբ՝ բարեբաղդաբար՝ այդ մասին յաջողուեց
 ինձ գտնել և ժամանակակցի վկայութիւն:
 Անանիա Մոկացի կաթողիկոսը իւր վիճաբա-
 նական թղթերից մէկում (ընդդէմ Խոսրով
 Անձեացու, Նարեկացի— չօրը) ասում է. « Այս
 են հանգամանք Բ և Գ եպիսկոպոսաց՝ այլոցն
 համաձայնութեամբ և ընծայական թխտով
 մայրաքաղաքացոյն ձեռնադրել պատրիարգ, և
 ո՛չ լոկ եպիսկոպոս. ուսիր ոչ որպէս քեզ
 թուի Հայրապետն՝ վասն Աւան քաղաքին կամ
 արքայական դրան եպիսկոպոս գոլով՝ այ՛քա-
 նօք միայն առաւելուլ զահերիցութեամբ, ա-
 պա թէ ոչ՝ պարտ էր ի տեսլեանն սբ Լու-
 սաւորչին զմիապետութիւնն ի վր Աբիանոսի
 տեսանել, զի նա կարգեցաւ վերակացու ար-
 քայական դրան բանակին, որում և՛ ըստ
 քեզ՝ աւելորդ էր քան զԱբիանոս այլում կա-

բօտանալ եպիսկոպոսի, այսինքն Ռստադիսի կամ այլ ումեք: Իսկ ապա Երուսաղէմի և Աղեքսանդրի և Անտիոքայ եպիսկոպոսքն յոյժ կըրասերազոյնք են, վասն ոչ զոք ունել[ոյ] թագաւոր, ի ձեռն որոյ դահափառեալ բարձրանային քան զընկերսն: Ընդէր ոչ կամիս հաւանել օրինական ասացելոցն, որ ի միասնականութիւնն կրթել միշտ հանդիսանայր. Գ անգամ ի տարւոջն յանդիմա՛, լինել օրինադրէ բոլոր Խորայէլի ելանել ի տեղին, զոր ընտրեսցէ տր, և զայն ոչ դատարկաձեռն: Այլ զիտեմ զի պարսաւի առ ի քէն «ոչ դատարկաձեռնդ» յիշատակել որ ասես Ո՛վ կացոյց զիս կապալատէր կաթողիկոսի, և զայն ոչ աժես զմտաւ եթէ զբոլոր զձեռամբ անկեալքս քոյ ո՛վ կացոյց քեզ պարտապան, և անողորմապէս գանձել տոկոսս խուռն զօշաքաղութեամբ, ո՛վ գերազանցեալք քան զՊօղոս և ի յերրորդն ժամանեալ յերկինն և զևսն անձառականսն լուեալ, անվաւեր քեզ համարեալ Պօղոսի մեծաջանութիւնն, առ ի ժողովել

զպտուղն երբեմն ի կողմանս Ասորոց փութաւով ինքն, և Բառնաբաս ելանել յԵրուսաղէմ առ ի պաշտել զուրբան, և երբեմն ի կողմանս Աքայեցոց և Թեսաղոնիկեցոց, բազում նախանձայորդոր հնարիւք վաղվաղել ի պաշտօն սրբոցն որ յԵրուսաղէմ: Այլ դու Արամի աշակերտեալ, անցուցեր զնովաւ, զի նա թերևս զպտուղ երախայրեացն միայն արգելուլ բաջաղէր, այլ դու բնաւին զհայրապետականս բառնալ զաթոռն ձեռնարկեցեր, զի անհոգ [յ]ընծայաբերութենէ ըստասոյիս կեանս»: (Նորին Անանիայի Հայոց կաթողիկոսի «Բայց արդ սակաւուք...»):

Անանիա Նարեկացու Բլբերով պարզուամ են ոչ միայն այս հայրապետի և Նարեկեան Գրքի ընդհանրապէս և մասնաւորապէս Խոսրով Անձեացու՝ մինչև այժմս վիճելի, լաւ հասկացուած և կամ զիտութեամբ քօղարկուած յարաբերութիւնները, այլ և Արամի ժամանակը և նշանակութիւնը: Խոսրով Անձեացին Արամի աշակերտ է կոչուամ կամ՝ ո-

որովհետև իսկապէս նրա աշակերտն էր և կամ՝
որովհետև հետևող էր նրա վարդապետու-
թեան: Տեսանք որ Արամի մեր ձեռքն հա-
սած միակ թուղթն էլ ուղղուած է՝ Ան-
ցեաց Ատոմ իշխանին: Խոսքով Անձևացու
ժամանակակից և ազգական Անանիա Նարե-
կացու և Անանիա Մոկացու յարաբերութեանց
մասին մենք արդէն առիթ ենք ունեցել մեր
ենթադրութիւնները յայտնելու, որոնք այս
նոր փաստերով աւելի ևս հաւաստիանում են
(Տես մեր հր. «Գիր Խոստովանութեան», յա-
ռաջարան):

Խնդիրն աւելի ևս կպարզուի, երբ կհրա-
տարակենք Անանիա Մոկացու, արդէն տպագր-
ութեան համար բողոքովին պատրաստ) թըղ-
թերը՝ ծանօթութիւններով և բնագրի բաղ-
դատութեամբ: [Այս թղթերն են. Ա. «Տեա-
ռըն Անանիայի Հայոց Կաթողիկոսի Յաղա-
գս սպստամբութեան տանն Աղուանից. որ
ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռ-
նադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի

Աթոռոյն» (չատ հետաքրքրական և լի պատ-
մական տեղեկութիւններով). Բ. «Տեառն Անա-
նիայի Հայոց Կաթողիկոսի. Պատճառ յաղա-
գըս զԽոսքով նզովերոյն զԱնձևացուց եպիս-
կոպոսն». Ա. «Նորին Տեառն Անանիայի Հա-
յոց Կաթողիկոսի. Յաղագս որ ասեն թէ՛ մի
պատիւ հայրապետին և եպիսկոպոսին, և վա-
սըն մի լինելոյ կոչմանն». Դ. «Նորին Տեառն
Անանիայի Հայոց Կաթողիկոսի. «Բայց այդ սա-
կաւուք...»:] Անանիա Մոկացի կաթողիկոսը՝
թէ և նեղ վանական կրթութեամբ անձն, իւր
հակառակորդներից պակաս զիտութեամբ և
հետևակ զրիչ սակայն մեր կաթողիկոսների
շարքին մէջ նշանաւոր և առաջնակարգ տի-
պերից մէկն է. անխոնջ, որոշ գաղափարի ծա-
ռայող, նախանձաւոր Լուսաւորչի Աթոռի միա-
պետութեանը և իշխանութեան սահմաննե-
րին, կամքի տէր, անվեհեր, անձնազոհ, խիստ
բայց քաղաքագէտ և ամեն յարգանքի ու
լուրջ ուսումնասիրութեան արժանի մի անձ-
նաւորութիւն: Ինչ վերաբերում է Ա. 44^ո Ան-

Յևաջեայ եղևնին, որի հրամանով Արամը գրեց իւր թուղթը, կարծումեմ որ այս նոյն այն Ատոմն է, որ յիշուում է հետեւեալ յիշատակարանների մէջ. «Թարգմանեցաւ վկայաբանութիւն ծառայիս Աստուծոյ (Աբղղմնեհի) յասորի գրոց ի հայ, հրամանաւ աստուածապահ տեառն Գուրգենայ Արծրունւոյ Անձեացեաց տեառն, ՅԻԲ (873) թուականութեանս Հայոց. յօգնականութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի աստուածաւիրի, և որդւոց իւրոց Տաճատայ և Արամայ» (Ջարբ. Հին Դպ. եր. 514):

— «ՆԼ թուականին գրուած մատենի մը մէջ ալ կը յիշատակուի Ատոմ Անձեացի պատմերորդ գործն աւելի բարձրին մէջ սպարած, որուն հրամանաւ՝ Արտաւազդ Մաղազունեաց (Մաղազունեաց ?) տէրն «բացայայտեաց զսուրբ պատուիրանս» (Ջարբ. Հին Դպ. եր. 550):

— Կայ թուղթ մ'ալ յանուն Թովմայի(?) առ Արամ եղևնի: (Ջարբ. Հին Դպ. եր. 550):

Արդեօք այս Ատոմ իշխանը միւլենոյն անձն է Ատոմ Անձեացեաց եպիսկոպոսի հետ: (Տես Ջարբ.—550):

Արամը ծաղկեց ամենայն հաւանականութեամբ Թ-դի վերջերը և Թ-դ դարի սկզբին, Խոսրով Անձեացուց առաջ: Վերջինիս մասին Անանիա Մոկացին ասում է. «Քանզի [ի] ՆԳ (954) թուականիս և ի ԳԺան ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձեացեացըն. այր համեստ և զխնաւոր, և ալեօք ծերութեամբ զարգացեալ. յանկարծակի իբրև ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իրիբ հակառակութեան, սկսաւ նախ զբարբառն գերակի արձակել ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւռիակէ կոչել և զԵրուսաղէմ՝ Եռուսաղէմ և որ սոցին նման է՝ ի սոյն յառեալ բարբառ: Իսկ զինի այսորիկ ապա այլ յառաջեաց բաջաղմունս անհեղեղս. քանզի հրամայէր մինչև մօրուս եկեալ՝ զզուլս խու-

զել մանկանց, թէ այսր աղագաւ կոչի կրտ-
րիձ, և զկնի մորուացն զհերսն ապա թողուլ,
երկայնիլ և մանիլ ցարունան, զի այսր աղա-
գաւ կոչին մանուկ: Եւ այս երկարեալ առ
անգամ մի, ապա և յեկեղեցի եմոյժ զբա-
ջաղմանն իւրոյ զգայուն, քանզի յաղագս
քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Այն
խաչն որ քահանայքն աւրհնեն և այլ զոր ոչ
աւրհնեն, միապատիւ է և աւելորդ զաւրհնելն
վարկանիմ: Եւ յայտօսիկ ներեալ մեր նմա,
ապա սկսաւ այլ իմն նոր հերձուած աւանդել,
մոլծանել յեկեղեցի աստուծոյ, քանզի ա-
սէր. Մի պատիւ և մի փառք հրեշտակաց և
հրեշտակապետաց, ըստ նմին՝ մի փառք և մի
պատիւ հայրապետին և եպիսկոպոսին... և
զբանդ «կոչումն» լուծումն ասէր և ոչ կրկին
պատիւ հայրապետութեանն: Եւ առաւել քան
զոյն ինոյն միտ յաւելլ զոր աղաչեալ մեր
բազում անգամ՝ դառնալ նմա [յ]այնմ անու-
ղայ և մտախաբ խորհրդոց, զոր թէև արտա-
սուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ

ուղղել զոր հարկեալ ի հրամանէ այ կարել
հրեղէն սրով և զբաժինն ընդ կեղծաւորսն
դներ, որ և զնոյն թօշակ տարաւ առ հան-
դերձեալսն պաշար կորստեան, զի ոչ զղջա-
ցաւ մինչև ի վերջին շունչն, վասնորոյ հար-
կեցաք զրել զայս մնացական կտակ առ յապա
եկեղոցն, զի զգուշացին յայնպիսի ընդվարայ-
ած, անութեանց և ուղղութեամբ նկատեսցեն
զաւելորտի առ հանդերձեալ կեանսն, զի շատ
է առուրն չար իւր» (Անան. Մոկացի. Պատճառ
յաղագս զԽոսրով նղովեղոյն. անտիպ: Տէս և
Կիրակոս պատմ: և Ուռպելեան):

Անանիա Մոկացու, Անանիա Նարեկացու և Արա-
մի անտիպ գրուածքները կհրատարակուին մի հա-
տորով կամ առանձին առանձին, ըստ յարմարու-
թեան, երբ այդ ինձ հնարաւոր կը լինի: Տես և իմ
հր. «Գիր Խոստով»:



Նախընթաց յօդուածներիցս մէկում (§ 8)
արդէն զէպք ունեցայ Խորենացու ինձ ի մօտոյ
յայտնի ձեռագրերի դասաւորութեան մի թե-

թե փորձ անելու: Այնտեղում արդէն նկատեցի որ Ա դասը երեք որոշ ստորաբաժանում ունի մինչդեռ Բ դասը—և ոչ մի: Երկար և մանրազնին զիտողութիւնները ինձ համոզեցին, որ Ա դասի ստորաբաժանումները՝ խառն ի խուռն, անկանոն և անկերպարան շեղումներ չեն, այլ առանձին առանձին խմբեր են, միմեանցից շատ անջատ՝ և որոշ կերպով սահմանաւորուած: Այս իսկ հիման վրայ այդ ստորաբաժանումները՝ աւելի պարզութեան համար՝ այսուհետեւ անուանելու եմ Ա, Բ, Գ խումբ, իսկ Բ դասը—Գ խումբ:

Այսպիսով իմ ձեռքում եղած 17 ձեռագրերը + Սանահնի օրինակը (ձեռքի տակ ունիմ Մառի հրատ. բաղդատութիւնը և ոչ թէ բուն ձեռագիրը) + Կարենեանցի 2 օրինակների բաղդատութիւնը = ընդ ամենը 20 օրինակ՝ կազմում են իմ դասաւորութեան, այն է՝ Ա, Բ, Գ, Դ չորս խմբերի հիմունքը: Խորենացու՝ թէև յաճախ ընդհատուող բայց երկարատե՝ ուսումնասիրութիւնից ձեռք բե-

րած հետեանքներիցս ամենազլխաւորն և ամենակարևորը համարում եմ ձեռագրերի այս դասաւորութիւնը: Մինչև այժմս իմ և ուրիշների արած մասնական փորձերը վերահանգնելու համար Խոր. բնագրի այս կամ այն հատուածը կամ բառը նմանում են մութ սենեակում խարխաբելուն, որովհետև չունէինք կշիռ, զնահատութեան մի որ և է հաստատուն չափ, այս կամ այն ընթերցուածի արժանաւորութիւնը կշռելու, այս կամ այն վարիանսը ընտրելու կամ խոտելու համար: Այժմս ինդիրը բոլորովին փոխուած է: Այն կէտերը, որոնք այս կամ այն պատճառով զրաւել էին ուշադրութիւնս և ուսումնասիրութեան նիւթ դարձել՝ այժմս նորից աչքից անցնելով այս չորս խմբերի տուած ընթերցուածների բաղդատութեամբ համոզուում եմ որ իսկապէս մթնում էինք խարխաբել, թէև զիտողութիւններիցս շատերը արդարանում են:

Առաջիկայ տարին—1895-ին—լրանում է Խոր. Պատմութեան առաջին հրատարակու-

Թեան 200-ամեակը: Այս երկու դարի ընթացքում բնագիրը անընդհատ ուսումնասիրութեանց նիւթ է եղել, մի բան որին չէ արժանացել և ոչ մի հայ գրուածք, ոչ նոյն իսկ Ս. Գրքի Թարգմանութիւնը: Սակայն շատ և շատ հեռու ենք քիչ թէ շատ ճշտուած քննադատական բնագիր ունենալուց: Եւ այդ լոկ այն պատճառով, որ չենք ունեցել հաստատուն հիմք, որի վրայ շինուած լինէին մեր ուսումնասիրութիւնները: Այդ հաստատուն և անհրաժեշտ հիմքը զտուած բնագիր ստանալու՝ բազմաթիւ ձեռագրերի դասաւորութիւնն է և խմբերի ճիշտ որոշումը, եթէ միայն այս ինձ յաջողուել է:

Պէտք է ցաւելով նկատել որ մեր հին մատենագրութեան և ոչ մի արդիւնքը մինչև օրս չունի այդպիսի քննադատական բնագիր, յայտնի ձեռագրերի դասաւորութեան վրայ հիմնուած, ուստի և չունինք և ոչ մի երես հին մատենագրութիւնից, որի ճշտութեանը կարելի լինէր երաշխաւորել: Այս իսկ պատ-

ճառով և ամեն մի տեսակ հետազօտութիւն, թէ պատմական և թէ գիտութեան այլ ճիւղերի վերաբերեալ, հիմնուած մեր «Եփեսոսի Կոնստանդինոսի վրայ» շատ խախտու է և պիտի կորցնէ շատ անգամ իւր հիմքը: Իսկ թէ ի՞նչ պատճառով մինչև օրս լուրջ կերպով չէ ձեռնարկուել քննադատական բնագրերի պատճառութեանը՝ այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է: Մեր բանասէրներից և ուսուցիչներից ամենամեծ մասը դեռ մինչև օրս էլ լաւ չեն ըմբռնել այդ բանի անհրաժեշտութիւնը և առաջնակարգ կարևորութիւնը և իրենց հետազօտութիւններն ու ուսումնասիրութիւնները հիմնում են այս կամ այն անխնամ հրատարակութեան վրայ, առանց նեղութիւն քաշելու երկար բարակ ձեռագրերի մէջ թարթափելու: Միւս կողմից՝ ձեռագրերը կամ ցրուած են եղել (և են), և կամ այնպիսի կեղբոններում են գտնուում, որոնք դիւրամատչելի չեն գիտնական բանասէրներին:

Այժմ մեր այս դասաւորութեան խմբերի

Հիմք են կազմել ինչպէս ասացինք, 20 ձեռագիր, որոնցից երկուսը ինձ ծանօթ են այն չափով, ինչ չափով որ նրանց ընթերցուածները հրատարակուած են Կարենեանցի բազմաթեան մէջ: Բացի այս 20-ից աչքի առած եմ ունեցել Վենետիկի 1843—65-ի հրատարակութեան 6 ձեռագրերի ընթերցուածները՝ հրատարակուածի չափով, ուստի և առանց գիտնալու թէ ի՞նչ ընթերցուած՝ ի՞նչ ձեռագրից է: Սրանց վրայ պէտք է աւելացնել Վանանդեցու հրատարակութիւնը, և յայտնի դրագարանի 1696-ին գրուած օրինակը, որ Բառմադարաների ասելով Վանանդեցու օրինակի տեսակիցն է. և վերջապէս պ. Մառի նկարագրած մի ուրիշ ձեռագիր, որ յար և նման է Սանահնի օրինակին (Հայկակ. Ձեռագ. ձեմ. Արևել. լեզ. Պրբ, № 1, տես Հանդէս Ամսօր. 1892, եր. 45): Ընդ ամենը ուրեմն 29 ձեռագիր, որոնց ընթերցուածները մասամբ ծանօթ են հրատարակութեամբ, և աւելի մեծ մասամբ ծանօթ են միայն

ինձ՝ համախմբած ձեռագրերիցս: Եւ, ահայ դրանց վրայ եմ հիմնել իմ խմբերի դասաւորութիւնը:

Կան էլի տասից աւելի ձեռագիր, որոնց մասին հետուից միայն լսել եմ, կամ զանազան հրատարակութեանց մէջ հանդիպել նրանց յիշատակութեանը: Այդ ձեռագրերի ինչ խմբի պատկանելը որոշել ինձ՝ այժմեան հանգամանքներում՝ անհնար է: Կարելի լինի թերևս ենթադրութիւններ անել, հիմնուելով միմիայն ~~պէ~~ կազմութեան վրայ: Այսպէս, օրինակ, յայտնի է պ. Եղեանցի մօտ գտնուած Խորենացու ափի կազմութիւնը (տես Յառաջ. Ասողիկի, հրատ. պ. Մալխասեանցի):

Վերջապէս չմոռանանք յիշել և այն, որ ինձնից առաջ Խորենացու ձեռագրերի և մասնաւորապէս զանազան հրատարակութեանց ~~դասաւորութեան~~ գործով զբաղուող միակ հեղինակն է Ադոլֆ Բառմադարաներ, (Ueber Das Buch „Die Chrie“, Leipzig, 1886, եր. 482—

489, *արտատպ. Zeitschrift der Deutschen Morgen. Gesel. Bd. XL.*) որը ի մի ամփոփելով Սորենացու Պատմ. քննադատական բնագրի պատրաստութեան համար եղած բոլոր աշխատանքները (մինչև 1886 թիւը), թէ վեներտիւմ և թէ ուրիշ տեղեր կատարուած (—անհրաժեշտ տեղեկութիւններ քննադատ. բնագրի պատմութեան համար), գալիս է այն հետեանքին, որ հակադրուած է վեներտի լաւագոյն (1843) և Ամստերդամի նախընթաց հրատարակութիւնը: Այս վերջինին դասակից է դնում Վարենեանցի Բ օրինակը և լէյպցիգիներ: Այս ձեռագրերի խումբը անուանում է Բաումգարտներ «ընդամիջարկեալ դաս», մինչդեռ վեներտեան ձեռագրերը՝ «ոչ—ընդամիջարկեալ», և բոլոր առաւելութիւնները ապիս է անկարծիք «ոչ—ընդամիջարկեալ» խումբին: Թէ Թովմաս վանանդեցու օրինակը ունի ընդամիջարկութիւններ՝ հաւանականաբար նոյն իսկ հրատարակչի գրչից, այդ անկասկած է (օրին. Մարաց թագաւորների ցանկը, և ըն.

տես Բաում. եր. 483), բայց թէ այդ կարգի ձեռագրերը (ըստ իմ տրոհման Գ խումբ) ընդհանրապէս «ընդամիջարկեալ» են և բոլորովին խոտելի, այդ մի հարց է, որին իմ հետազոտութիւնները բացասական պատասխան են տալիս (տես նաև «Քննասէր» Բ. Նորայրի): Թէև թիւրիմացութեան տեղիք չըտալու համար՝ պէտք է ասել, որ վանանդեցու նախընթաց (Editio princ.) ոչ մի դէպքում չէ կարող մի անստգիւտ ներկայացուցիչ համարուել մի որևէ խմբի: Այդ հրատարակութիւնը (ուրեմն և նրա ձեռագիրը) պատկանում է մեր Գ խմբին և կրելով հանդերձ հրատարակչի գրչից մտցրած ուղղադրական և այլ մանր ու խոշոր փոխութիւններ, ունի նաև ակնբեր հետքեր «չէլ խմբի ձեռագրից սրբագրուած լինելուն: Այսպիսի «բացարձակ» դէպքերը հազուադիւրէն են, երբ մի խմբի պատկանող ձեռագիր սրբագրուած է մի ուրիշ խմբի ձեռագրով: Այսպիսի պատահարի դեղեցիկ օրինակ կարող է համարուել մեր

ձեռագրերից թ. 611-ը՝ որի սրբագրութիւնները՝ նոյն խակ իւր բուն գրչի ձեռքով՝ զրուած են լուսանցքներում և տողամէջերում: Ընդհանրապէս՝ այն բոլոր դէպքերում՝ երբ փոքր ի շատէ տատամսութեան տեղիք է երևացել, լաւ եմ համարել հիմնուել զլիսաւորապէս «նիջապէս» իմ ձեռքումս եղած ձեռագրերի վրայ, իբրև աւելի հաստատուն և վերաստուգութեան ընդունակ նիւթի վրայ:

Ձեռագրերի այս 4 խմբից իւրաքանչիւրը՝ զանազան չափերով, ունին իրենց վատ և լաւ կողմերը, իրենց ուղիղ և աղձատ ընթերցուածները: Շատ անգամ Ա Բ Գ խմբերը միանում են ընդդէմ Դ-ի, բայց շատ անգամ էլ Դ-ան միանում է Գ-իմի հետ, ընդդէմ Ա-ի, կամ Ա Գ Դ ընդդէմ Բ-ի, Բ Գ ընդդէմ Ա Դ-ի և ըն. և ըն.:

Խմբերի արժանաւորութիւնների և թերութիւնների, այլ և իրար հետ ունեցած աւելի նուրբ յարաբերութեանց մանրամասնութիւնները կորոշուին Խորեն. բնագրի նոր հը-

րատարակութեան մէջ, եթէ այդ կատարելու հնարաւորութիւն արուի ինձ: Այդ հրատարակութեան մէջ ի նկատի կառնուին և մեր բազմաթիւ պատմական—կրօնական գրուածքների (ապեալ և անտիպ) մէջ պահուած 10-րենացուց կարճ և երկար անթիւ փոխառութիւնները, հարկաւ այն չափով, որ չափով որ այդ անհրաժեշտ է մի քննադատական ըստ կարելոյն ճիշտ բնագիր ձեռք բերելու համար:

Առ այժմն բաւականամանք տալով մեր հետազոտութիւնների վրայ հիմնուած խմբերի տրոհման ցուցակը, որպէս զի եթէ չյաջողուի մեզ այսչափ զբաղեցնող գործը բոլորովին զլուս բերել կամ՝ զոնէ շարունակել՝ ուրիշները զիւրուէիւն ունենան մեր արածից օգտուելու և եղածը կատարելագործելու:

Ահա մեր խմբերի ցանկը:

Արաբական թուերը մեր մտտենադարանի «յթեան» թուահամարներն են ցոյց տալիս: Ձեռագրերի մանրամասն նկարագրութիւնը, աը-

փերի կազմութիւնը, գրութեան թուականները (տես § 8), գրիչները, տեղը, ևն, որոնք ունին իրենց երկրորդական նշանակութիւնը խմբերի դասաւորութեան գործում, թողնում եմ՝ ամբողջ բնագրի հրատարակութեանը կցելու համար, եթէ այդ երբ և իցէ պոլս դայ: Փակագծուած թուերը սպազրեալ ցուցակի համարներն են:

ա 249

Ա Սումբ. բ 1661 [1619]
 գ կարինեանցի ա օրինակը (2).

ա 248

բ 1663 [1621]

Բ. Սումբ. գ 1668 [1626]
 գ Սանահնի օրինակը (=Ներսէս գրիչ).
 ե № 1 Հայկ. Չեռ. ձեմ. Ար. լեզ. Պբգ.

ա 611

բ 615

գ 1662 [1620]

Գ. Սումբ. գ 1664 [1622]

ե 1666 [1624]

զ 1667 [1625]

ա 616

բ 1665 [1623]

գ 1669 [1627]

դ 1671 [1629]

Դ. Սումբ. ե 1672 [1630]

զ 1686 [1644]

է Անանգեցու հրատարակ.

ը կարինեանցի բ օրինակը

(=«Ամբրոնացու»)

թ Լէյպցիգի օրինակը (ըստ Բառագարաների):

Այսուհետև մեր հետազոտութեանց մէջ Ա Բ Գ Դ գլխատառերը ցոյց կտան խմբերը, իսկ փոքր տառերը խմբի այս կամ այն ձե-

ուազիրը (օրինակ՝ Ա՝ = թ. 249, Բ՝ = թ. 1668
 և ընդ)։ Ինչպէս արդէն նկատեցինք մի քանի
 անգամ՝ վենետիկ ձեռագրերի ընթերցուած-
 ները որոշ չեն թէ որք ինչ ձեռագրից է,
 այսչափը միայն կարելի է ասել որ նրանք
 պատկանում են Ա Բ Գ խմբերին։ Յայտնի դէպ-
 քերում մենք կորոշենք թէ ինչ ընթերցուած
 (վենետիկան) ինչ խմբի ձեռագրից միայն կա-
 րող է լինել։ Պ. Եղեանցի և Արզնիի թ. 211
 (§ 8) ձեռագրերը ամբի նման կազմութիւն ու-
 նին (Խորենացի, Ասողի, Լաստիվերացի, Եւ-
 սեբի Եկեղ. Պատմ. և ընդ)։ Տփի կազմութեամբ
 նման է սրանց և Բ՝ (= Մանասէնի) օրինակը.
 (Խորենացի, Ասողի, Լաստիվերաց. և Աշխ.
 Խորեն.) թէև ոչ առաջինների չափ ստուար։
 Նոյն կազմութիւնն ունի և Ա՝ ձեռագրի տու-
 փը, որից կարելի է եզրակացնել որ պ. Եղեան-
 ցի և Արզնիի ձեռագրերը կարող են պատկա-
 նել Ա Բ խմբերին՝ բայց ոչ Գ Դ-ին։ Աւելի
 ճշտելու համար պէտք է գտնել ֆ բնորոշ ըն-
 թերցուած ունենալ և այն ժամանակ՝ նոյն

իսկ տուանց ձեռագիրը տեսած լինելու՝ կա-
 րելի է որոշել նրա խումբը։ Այդպիսի բնորոշ
 ընթերցուածների նմուշներ կանք հետզհե-
 տէ մեր դիտողութեանց մէջ, որով Խորենա-
 ցու ձեռագիր ունեցողները կարող են որոշել
 իրենց ձեռագրի ինչ խմբի պատկանելը և
 միւս կողմից պրանով մի նոր փորձական վե-
 րաստուգութեան կենթարկուի իմ առաջարկած
 դասակարգումը։

Յ Է

«Խոր. Պատմ. Ուսումնասիրութիւն» վերնա-
 գիրը կրող յօդուածներիս շարքում (Ե) ա-
 սիթեմ ունեցել առաջարկել մի սրբագրու-
 թիւն հեռուեալ հաստուածում. նախ խժա-
 կան ժառանգեցին յորջորջումն, Բիւրատ և
 Սճապ» (Բ. կգ)։ Սմբատի փոխանակ առա-
 ջարկում էի կարգաւ Տրդատ, հիմնուելով այն
 ժամանակ ինձ յայտնի միակ մի ձեռագրի ըն-
 թերցուածի վրայ (Մանասէնի Մերսէս գրչի օ-
 րինակ)։ Պատճառաբանութիւնս աւելորդ է

կրկնեւր: Սանահնի օրինակը մեր դասաւորութեան Բ¹ է: Հետաքրքրական է իմանալ թէ որչափ է արդարանում այս կէտում առաջարկած դասաւորութիւնս: Չեռքումս եղած բոլոր ձեռագրերի այս կէտը քննելով՝ գտնում ենք. ամբողջ Բենն ունի ուղիղ ընթերցուած — Տրգատ» նոյն ուղիղ ընթերցուածն ունի և ամբողջ Այբը: Ուրեմն երկու խմբի բոլոր ձեռագրերը ունին Տրգատ» իսկ միւս երկու խումբը՝ սխալ ընթերցուած, այսպէս.

Ա.Բ. «Տրգատ»

Գ. «Սմբատ»

Գ. «Սմպատ»

(Մանր կամ երկրորդական ընթերցուածներ. Գ¹ և Գ² ունին «Սպատ» սակայն Գ³ յետոյ աւելացնում է բառի զլխին պակասող «մենը» Գ⁴ ունի նման Գ-ին «Սմբատ»): Վ.Լ.ը (=Վենետ. 1843-ի հրատ.) չէ նշանակում որևէ տարբերութիւն այս կէտում, բայց անկարելի է որ այդ հրատարակութեան 6 ձեռագրերի մէջ չլինի Մ.Բ. խմբից որևէ ձեռագիր.

գիր. սակայն նկատեցինք որ Վ.Լ.ը չէ տալիս Բ¹ ընթերցուածները, այլ միայն «կարևոր համարուածները»:

Ուղիղ ընթերցուած պէտք է լինի (= Տրգատ) նաև պ. Եզեանցի ձեռագրում, եթէ միայն ուղիղ է միմիայն տփի կազմութեան վրայ հիմնած մեր ենթադրութիւնը: Ուղիղ ընթերցուած պիտի լինի նաև Բ² օրինակում (այն է՝ Մատի նկարագրած Ս. Պետերբուրգի ձեռագրում և Ա՝ ձեռագրում, այսինքն է՝ կարինեանցի Բաղդաստութեան «...» օրինակում: Սակայն այս ձեռագրի ընթերցուածները այնչափ սակաւաթիւ են «Բաղդաստութեան» մէջ, որ դժուար է մի դրական բան ասել, ուստի և ցանկում դրել ենք հարցական նշան: Շատ ցանկալի էր, որ ձեռնհաս անձինք ստուգէին այդ երեք ձեռագրերի այս բնորոշ ընթերցուածը և բարեհաճէին հաղորդել ինձ կամ հրատարակել:



Խորենացու դժուարիմաց հատուածներից կարելի է ասել ամենադժուարիմացը, որ «զայթակղութեան քար» անունն է ստացել, Ա գիրք բ զլիւի «որպէս զայբ առ քէ» ծանօթ ասացուածն է: Շատ փորձեր են եղել այդ հատուածը մեկնելու, որոնք աւելորդ ենք համարում այստեղ միառմի առաջ բերել (տես Աշխարհաբար Խոր. ծնթ. 8. Լմիկի ռուս. նոր թրգ. ծնթ. 3, և լն. և լն.): Այդ փորձերից ամենայաջողն է Վենետիկի 1881-ի փոքրադիր հրատարակութեան առաջարկածը. «որպէս զԱ[ստեղաբաշխութիւն] առ Բ[աղդէացիա] և զԵ[րկրաչափութիւն] առ Ե[րկրագիտացիա], զԹ[ուականութիւն] առ Փ[իւնիկեցիա], և զԵ[րաժշտականութիւն] առ Թ[րակացիա]»:

Սակայն Էմիլը իւր նոր թարգմանութեան մէջ այս բացատրութիւնը անուանեց նոյնչափ անյաջող, որչափ և առաջին փորձերը: Աւելի ձիշտ, ուրեմն և ասել է թէ աւելի լաւ՝ զնա-

հատեց այս յաջող բացատրութիւնը Բաուս գարաներ (Das Buch «Die Chrie» եր. 489), հաղորդելով որ այդ բացատրութիւնը պատկանում է Հ. Ալիշանին (ինչպէս նաև այդ 1881-ի հրատարակութեան մէջ մտած ուրիշ մի քանի յաջող սրբագրութիւնները): Ըստ Բաուս գարաների Հ. Ալիշանը իւր այդ բացատրութիւնը առել է Վանական վարդապետի «Հարց և պատասխաններից: Բաուս գարաններ աւելացնում է նաև, որ նման մի ասացուած կայ և De Lagarde-ի Symmetria-ում (I, 175, 48—50), որն էս չունիմ ձեռքիս: Մի նամակում այդ մասին մի քանի նոր տեղեկութիւններ հաղորդեցի և ես «Ամսօրեայ Հանդիսին», յայտնելով որ նրման հատուածներ կան և «Ռաւիթ Անյադթի», Մագիստրոսի և Միլիթ. Այրիվանեցու մէջ: Առաջ բերենք միայն Ռաւիթի Սահմանաց հատուածը. «Եւ պարտ է գիտել, թէ չորք են տեսակք. Բ. — Կ. անն, Երաժշտ. Կ. անն, Ելիւ. շափուկ անն, ասարգաբաշխականն. . .) Եկեսցուք այ-

սուհեակ և ի չորրորդ գլուխն և ասասցուք՝
 թէ ո՞րք ամանք են զտողք այսոցիկ տեսակաց:
 Եւ պարս է գիտել, եթէ զՌուսիանն Փիւնիկեցիք
 գտին, որպէս վաճառականք գորով և թուա-
 կանութեան պէտս ունեւորվ առ ի համարել-
 իսկ զԵրաժշտականն Նշանադէտ, վասն զի անտի
 էր Որփեւս, զորմէ ասեն նախ զտանել զերա-
 ժրշտականն. իսկ զաստիճանաշրջանն Գաղղեա-
 ցիք, վասն զի անամպ և հանապազ ջինջ զո-
 րով օգոցն՝ դիւրաւ կարացին ըմբռնել զշարժ-
 մունս աստեղաց. իսկ զԵրաժշտականն Լիզիտ-
 րացիք գտին ի հարկէ, քանզի Նեղոս Էջն»
 (Մատենադր. Գաւթի, Վենետ. 1833, եր.
 196, 199): Մման հատուած կայ և Գիւտ
 կաթողիկոսի թղթում (կաղանկատուացի) և
 Անանիա Մոկացու թղթում (§ Թ) Էջն. Էջն.:

Ասածներիցս երևում է, որ մեր նախնիք-
 ներին շատ լաւ ծանօթ էր Խորենացու այս
 հատուածի միտքը և ասացուածի գործա-
 ծութիւնը հասարակաց էր: Միջնադարեան
 Եւրոպայում գտնում ենք նոյնը. «Les scolas-

tique du moyen âge n'avaient donc pas si grand
 tort de faire entrer la musique dans le
 quadrivium, qui comprenait avec elle l'a-
 rithmétique, la géométrie—et l'astro-
 nomie. (մտացել եմ նշանակել յուշտակա-
 րուսս թէ ճրտեղից եմ ստել):

Այսպիսով ուրեմն Հ. Ալիշանի բացատրու-
 թիւնը կատարելագոյն արդարանում է: Միակ
 գծուարութիւնն է մնում այն, որ այս բա-
 ցատրութիւնը չէ մեկնում հատուածի բոլոր
 ամուերը: Գնենք ապագրի բնագիրը. «Որպէս
 զայր առ քէ» և զչ. և զթոյ առ փիւր և
 զկենն առ եչ» և զշայ առ «է»: Կենն ընդու-
 ներով Երկրաշարժութեան նշանագիրը և շան
 Երաժշտութեանը, անբացատրելի են մնում
 Գոն և Սէն: Մինչև այս կէտին հասցրել էի
 ուսումնասիրութիւնս, առաջ քան «Ամսօրնայ
 Հանդիսին» գրելս (տես «Հանդէս Ամսօր» 1892,
 գեկա. եր. 370—72): Այժմս մեր գառաւորած
 խմբերը գծուարութեան այս վերջին հանդոյ-
 ցին էլ լուծում են: Այլա ապագրի ստիւրական

ընթերցողաճն ունին ԱԲԳ, մի քանի օրինակներում շատ աննշան տարբերութեամբ (փոխանակ ասելով՝ դուք—այբ) փոխանակ զլայ—շայ): Մինչդեռ Գան ունի հետևեալ ընթերցուածք. «Որպէս զ. ա. առ. ք. և զ. թ. առ. փ. և զ. փ. առ. և. և զ. շ. առ. թ.»:

Այս խմբի բազմաթիւ ձեռագրերը չունին նոյն իսկ ամենամանր տարբերութիւն, բացի կէտերի և պատիւների տարբերութիւնից, որ աւելորդ ենք համարում նշանակելը: Լաւ ուշադրութիւն դարձնելով ընթերցողը կնկատէ, որ այս ընթերցողաճում պակասում է զլայ աւելորդաբանութիւնը, որ՝ առաջացել է թոյի նախդիր զան իբրև առանձին համառօտագրութիւն ընդունուելուց: Այս ընթերցողաճում ունինք «զլայ առ սէ»-ի փոխանական «զ. շ. առ թ.» այն է՝ զերաժշտութիւն առ Թրակացիս: Այսպէս ուրեմն սէ ընթերցողաճը սխալ է և առաջ է եկել սէի և թոյի նմանութիւնից. երկուսն էլ կազմուած են երկու ուղիղ, ուղղահայեաց և հաւասար երկա-

րութեամբ դժերից, նոյն իսկ մեր ձեռագրերից մի քանիսում շփոթուելու չափ իրար նման:

Ի լրումն ամենայնի, կարծես թէ այլ ևս որ և է կասկածի տեղիք չթողնելու համար, Գ՝ ձեռագիրը լուսանցքում ունի հետևեալ ք. ց. արո-նի-ը. «զասանդաբաշխութիւն առ Քաղ-դէացիս, թուականութիւն առ Պիւնիկեցիս, երկրաչափութիւն առ Եղիպտացիս, երաժշտականութիւն առ Թրակացիս»:

Այս ձեռագրի (թ. 1665) յիշատակարանն է՝ «Եւ զայս Մոսէս Խորենացոյ Պատմագիրքս է Անդրիանու Պօլսո՝ Առաջնորդ՝ Եփրեմ վարդապետին. ի վայելումն իւրումն անձին. Հաղար, հարիւր, քառասուն» հայոց թուականին: (Փրկչական 1691 թուին):

Լուսանցքագրութիւնը նոյն վրջից է, ինչ վրջից որ է պատմութեան բնագիրը:

Ամբողջութեան համար աւելացնենք, որ Գ խմբից միակ բացառութիւն կազմողն է Վանանդեցու հրատարակութիւնը, որ ամենա-

մանր կէտերումն իսկ հաւատարիմ մնալով
Պր խմբին, հէնց ձիշտ այս կէտում ունի ԱԲԳ
խմբերի ծանօթ ընթերցուածք, որ անշուշտ
մի սրբագրութիւն է՝ իրեն ոչ խմբակից ձեռա-
գրի վրայից կատարուած, այլ և փակագծի
մէջ ունի՝ երևի հրատարակչի՝ բացասութիւ-
նը այսպէս. «Այս նշան, Ալէք՝ Բաղդէպոսոս ա-
թի՝ Յոնաց: ԶԼ և ԹԼ՝ Բաղդէպոսոս ա- փո-
սոնաց: Այսին Բաղդէպոսոս ա- փոսո-
նաց: Են՝ Բաղդէպոսոս՝ ա- Անթիմա՝ Յոնաց:»

Այս բացատրութեան իմաստը ես չեմ ըմ-
բռնում: Եթէ սակայն կայ որ և է իմաստ:

Մտում է միայն նկատել որ Պր խմբի ուղիղ
ընթերցուածն է լինելու («գ. շ. առ թ») և «լամբրոնացու» օրինակում (= Պր⁰), թէ և
այդ մասին ոչինչ չկայ նշանակուած կարի-
նեանցի Բաղդատութեան մէջ: «լամբրոնացու»
օրինակը գտնուում է Արժ. Տէր Գիւտ քահա-
նայի ձեռքում, ուրեմն և Տէր Հօրն է մտում
ստուգել այս ենթադրութիւնս: Նոյն ուղիղ
ընթերցուածն է լինելու և լէյպցիգի ձեռա-

գրքում (Պր¹), եթէ միայն սրբագրութեան չէ
ենթարկուած վանանդեցու նման: Այդ օրի-
նակն եղել է Բառմզարտների ձեռքում, բայց
յարգելի գիտնականը երևի չէ նկատել:

Անցեալ տարի Խորենացու այս մի քանի կէտերը
ձեռագրերում խուզարկելիս՝ ինձ օգնեց սիրայօ-
ժար գործակցութամբ դպ. Բագրատ վարդապար-
եանցը, Մայր Աթոռիս միաբաններից:

1894, յունիս.



ՀՀ Ազգային գրադարան



NL0345700

